



ՎԵՐԴԱՆ ԵՀՐԱՒՄԵԱՆ

Վ է Պ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ի.



Ի ականատես պառաւ, որ ապ-
րեց մինչև տասնուիններորդ
գարի վերջին տարին, պատ-
մում էր, թէ այս օրը սոսկալի
օր էր, երբ աշխարհ եկաւ
վարդան Ահրումնանը, իրեւ
թէ երկինքը շարումակ որո-
տում էր, երբեմն մոնշում ամենի զա-
գանի պէս, մթին ամպերը, ղեկը կորց-
րած նաւերի նոման, տատանւում էին, չիմանալով
ուր զնալ: Բայց անձրե չէր զալիս, և չեկաւ ամբողջ
օրը: Երկիրը խաւարուել էր, զատաղի հողմից բարձ-
րացող փոշին ոլոր-մոլոր պառյտներ էր զործում փռ-
զոցներում և քաղաքին տալիս վիթխարի աղօրիքի
տեսք:

Աշխարհագրական մեջ քարտիզում այս քաղաքը,

հարկաւ, ունի իւր որոշ տեղն ու որոշ անունը։ Դո-
նէ դնդասեղի գլխիկից շատ փոքր մի կէտ ցոյց է
տալիս, թէ նա գոնուում է Սև ու Կասպից ծովերի
մէջտեղում, Կովկասեան լեռնաշղթայի ստորոտում։
Իւր արտաքին տեսքով, մանաւանդ ներքին կենցա-
ղով, վարք ու բարքերով, անցեալ ու ներկայով, խե-
լօք ու յիմար աւանդութիւններով ու սովորոյթնե-
րով նա այնքան նման է Կովկասի միւս քաղաքներին,
որ հարկ չըկայ նրա իսկական անունն այստեղ յի-
շելու. Թող, ուրեմն, նա կրի մի անդործ կա-
տակարանի հնարած կեղծանունը – Զիլզիլ։ Ես շատ
շնորհակալ եմ այդ կատակարանից, որովհետեւ նա
ինձ ազատում է ընթերցողի հետաքրքրութիւն ա-
սուած անողոք հալածանքից, որ երբեմն խեղճ վի-
պասաններին ենթարկում է ինկվիզիցիայի։

Վարդան Ահրումնեանի ծնունդը կատարւում էր
Զիլզիլ քաղաքի միջին մասում, որ քրիստոնեանե-
րի թաղը բաժանում էր մահմետակամների թաղից,
մի տափակ կտուրով միյարկանի քարաշէն տան մէջ։
Դրսի կողմից այս տունն ունէր միայն մի լուսամուտ,
քողաւորուած երկաթէ ամուր ցանցով, երկու խուլ
պատուհաններ և մի ահագին դարբաս, որ միշտ փակ
էր երկու հաստ նիգերով։ Չորս շաբք երկաթէ գա-
մեր, որոնց գլուխներն ունէին սունկերի մեծութիւն,
այս դարբասին տալիս էին միջնադարեան շուք իրանց
ժանգով։ Մույլութիւնը կըկնապատկւում էր լուսա-
մըտի երկաթէ ցանցի թանձը փոշով ու սարդի խիտ
ոսսայններով, որոնց մէջ հանգչում էին անթիւ ճան-
ճեր։ Նայողն ակամայ կարծում էր, թէ ահա ահա
տան մի ծայրից կերևայ պահապան դինուորը հրա-
ցանն ուսին, և լուսամտից կը նայէ թշուառ բան-
դարկեալի կանանշ-դեղնագոյն ուսած դէմքը։

Հատ քչերն էին մտնում այդ դարբասի մէջ բա-

ցուած փոքրիկ կամարաձե դռնով ներս, կանխապէս զարկելով նրա վրայ քաշ արած հաստ ու կեռ երկաթէ զարկոցը, որ նոյնպէս ժանգոտուել էր քիչ գործածուելոց: Եւ նրանք, որոնք մտնում էին, դուրս էին գալիս ոչ ուրախ դէմքով:

Սյստեղ էր բնակւում Զիլզիլ քաղաքի յայտնի վաճառական Բաղդասարը, Պարսից վերջին խանի ախոռապէտ Ահրումի թոռը: Յայտնի՝ ոչ այնքան իւր հարստութիւնով կամ ծագումով, որքան անմատչելի, ժանդ նոյն իսկ մարդատեաց բնոյթով: Այս մարդը խոյս էր տալիս հարևաններից, ատում էր աղջական-ներին (և իրաւունք ունէր, որովհետև շատերը ձրիակերներ էին), իսկ բարեկամներ գրեթէ չունէր և չէր էլ կամենում ունենալ: Սափրիչ Պօղոսը, որ կիրակի առաւօտները գնում էր Բաղդասարի երեսը թռաշելու, հաւատացնում էր, թէ անհիւրընկալ մարդը նոյն իսկ իւր «ուստային» ընդունում է տհաճութեամբ: Աւագ քահանայ Տէր-Սարդիսը, որ միայն Զատիկ ու Զրօրննէք օրերն էր այցելում մոայլ տունը, պնդում էր, թէ նոյն իսկ այդ ուրախ օրերին Բաղդասարը շի կամենում հիւր ընդունել, բացի մի մարդուց — քաղաքի առաջին վաճառական Աբրահամ աղայից:

Օհա թէ ինչպիսի մարդ էր Բաղդասարը և ահա ինչու այն տաղնապալի պահին, երբ նրա կինը գըտնւում էր ծանր երկունքի մէջ, ոչ ոք շըկար այդ մարդու մօտ: Նա անցնում էր սենեակից սենեակ, հառաչում, ինքն իրան բարկանում և մերթ ընդ մերթ ականջ դնում դէպի ննջարան, ուսկից լսում էին Գիւլիւմի ճշերն ու աղաղակները: Գիւլիւմը ծնում էր թւով երրորդ զաւակն իւր ամուսնութեան ութերորդ տարում: Առաջինը մեռել էր մի տարեկան հասակում: Այս առիթով հասարակութեան մէջ պտտում էին զանազան շար շշուկներ Բաղդասարի հայրական:

դպացման մասին։ Պատումում էին, օրինակ, թէ մի օք, սաստիկ բարկանալով կնոջ վրայ, այնքան ինքն իբան կորցնում է, որ բռնում է մի տարեկան աղջկանը թեսերից և նրանով զարկում մօք զլիսին։ Թը շուառ երեխան իսկոյն աւանդում է հոգին։ Եւ պատմողները Բաղդասարի այս վայրենութիւնը վերադրում էին նրա ատելութեանը ղէպի իւր զաւակի սեռ։ Սակայն շատերը բողոքում էին այս մեղագրանքի ղէմ։ Եթէ Բաղդասարի համար այդշափ ատելի է աղջկի-զաւակը, ապա ինչու չի սպանում իւր միւս աղջկան, Մարիամին, որ այժմ արդէն հինգ տարեկան է։

Թէ որն էր ճիշդ այս կարծիքներից—դժուար էր ասել։ Մի բան միայն անհերքելի էր՝ Բաղդասարի ջերմ փափագը՝ ունենալ, վերջապէս, մի արու զաւակ։ Եթէ ծնուռողն այս անզամ տղայ կըլի—վկայ է Աստուած՝ Բաղդասարը Դիւկիւմի համար կըզնի մի կտոր թանգարին թաւիշ։ Իսկ եթէ, Տէրը մի արասցէ, աղջիկ կըծնի—կըթքի անամօթ կնոջ երեսին, այնուհետև հաց էլ չի տալ ուտելու արգանդը անիծուածին։

Յանկարծ մի երկարատև ճիշ ընդհատեց Բաղդասարի մտածմունքները։ Յետոյ լսուեց մի ուըիշ, բոլթովին տարբեր, ճիշ, իսկ և իսկ տոպրակ զցած խոզի ճափ ճվճից։ Բաղդասարը հասկացաւ բանի էութիւնը, երեսին խաչակնքեց։ Նոյն ըոպէին ներս մտաւ նրա զոքանչը, մէկը Զիլզիլ քաղաքի ոյն սպառաւներից, որոնց մէջըն այնքան փաղաժամ կորանում է ասիական կեանքի բռնութեան ներքոյ։

—Աչքդ լոյս, փեսայ ջան, կնիկդ ազատուեց...

— Ազատուելը գլխիդ տուած, տղայ, թէ աղջիկ...

— Տղայ...

— Լաւ։ Գնա բանիդ...

Պառաւը չքացաւ։ Բաղդասարը շարունակեց

անցուղարձ անել պարսկական գորգերով ծածկուած յատակի վրայ այնպիսի անկանոն քայլերով, որ նրա երկայն գգակի սուր ծայրն օդի մէջ գծում էր ամենատարօրինակ զիգզագներ։ Վերջապէս, Աստուած լսեց նրա լրիկ աղօթքները, դադտնի հառաշանքները և պարզեց նրան արու ժառանգ։ Այժմ թող թըշնամիների (Բաղդասարն ամբողջ մարդկութիւնը համարում էր իւր թշնամի) աշքը դուրս գայ։ Հէ, անիծուածներ, կարծում էիք Բաղդասարն անժառանգ կըմայ ու նրա տուն ու տեղը քարուքանդ կըմինի մահից յետոյ…

Քառորդ ժամ անցած լուր եկառ, թէ Բաղդասարը կարող է տեսնել իւր ժառանգին, եթէ կամենում է։ Նա անմիջապէս անցաւ ննջարան։ Այնտեղ նրա աշքին ներկայացաւ հետևեալ տեսարանը։ — Սենեակի մի անկիւնում պառկած էր Գիւլիւմը, թոյլ, անզօր, գունատ որպէս դիակ, աշքերը փակ, սակայն մի երջանիկ ժալիտ սեղմուած շրթունքների վրայ։ Նրա գլխի աջ ու ձախ կողմերում նստած էին երկու քոյրերը, Զավահիրն ու Զառիկը, և լալիս էին… ուրախութիւնից։ Ուրախ էին, որ իրենց քոյրը ծնել էր տղայ և մի անգամ ընդ միշտ ազատուել Բաղդասարի դառն կշտամբանքներից։ Միւս անկիւնում, բաց յատակի վրայ, երեսում էր մի կլոր փոս, նրան կից՝ տաք ջրով լի մի պղնձի տաշտ, որից բարձրացող շոգին սքօղել էր մի քայլ հեռու դրած երեխային, ինչպէս նօսր ամպը նորածին լուսնին։ Մանկաբարձուհու զերը կատարում էր Հերիքնազլ։ Արևալուղի թևերը մինչև արմունքները քաշած, նա պատրաստում էր նորածնին լողացնելու։ Խոկ նորածինը բարձրացըել էր այնպիսի բողոք, որ, կարծես, ուզում էին նրան խորովել, և նա զգում էր այս։ Սրդարն, այն գործ ողութիւնը, որ կասարեց

Հերիքնազը, հաւասար էր խորովելուն։ Նա դիեց մանկանը տաք ջրի մէջ և սկսեց նրա նուրբ մարմինը լուանալ այնպիսի ուժով, որ, կարծես, կեղտոտ լաթ էր լուանում։ Ցետոյ հանեց նրան ջրից ու ըսկսեց վրէն աղ սփռել, առանձին ուշ դարձնելով կոնատակերի և այլ ծածուկ տեղերի վրայ։ Հարկաւ, նորածինը բարձրացրեց անասելի գոռոց։

— Զայնդ վո՞րդ քաշիր, հարամզադա, — ասաց նրա տատը ուրախ կատակով, — քեզ աղ են անում, որ չըհոտես։

— Համ էլ որ կաշիդ պնդի, շըքրտնես, — աւելացրեց Զավահիը։

— Համ էլ որ անհամ մարդ շըդառնաս, — լրացրեց Զառիկը։

Անհանգիստ նորածնին, օրինաւոր աղելուց յետոյ, Հերիքնազը դրեց խանձարուրի մէջ, փաթաթեց ու սկսեց ձեռներն ու ոտները մետաքսեայ լայն ժապաւչնով ամուր կապկապել։ Կարելի էր կարծել, որ փոստային փաթեթ էր պատրաստում ուրիշ քաղաք ուղարկելու համար։ Ճատ տարիներ յետոյ երբ մանուկը ցոյց տուեց իւր արտակարգ ձիքերը, պառաւներն ասում էին. «Կապողն է այնպէս կապել։ Նոյն պառաւները հաւատացնում էին, թէ մանուկը, մօր արգանդից դուրս գալով, իսկոյն աղաղակել է։ Ռուզում եմ, ուզում եմ։ Պնդում էին նաև, թէ ներկայ եղողները ջրից դուրս բերելիս նրա կըծքի վըրայ նշմարել են սի կլոր դեղնագոյն բիծ, իսկ և իսկ նման ոսկի իմպերիալի։ Ումանք հաւատացնում էին, թէ այդ բիծն այժմ էլ դըոշմուած է այնտեղ և թէ նա Վարդանի անզուզական բաղդի նշանն է։

Բաղդասարը մօտեցաւ իւր ժառանգին, նայեց նրա կապտակարմրագոյն դէմքին, ժպտաց, եթէ միայն կարող էր ժպտալ այդ դաժան դէմքը, և արտա-

սանեց հետևեալ փաղաքշական դարձուածը.

— Ճան լակոտը եփած ճղումդուրի է նման:

Յետոյ արխալուղի գրպանից հանեց երկու արձաթէ գրամմեր և դրեց նորածնի փորի վրայ. Նրա օրինակին հետևեցին զոքանչն ու քենիները. Հերիք-նազը մօտեցաւ, վերցրեց այդ դրամները և դրեց գրպանը իբրև վարձ իւր աշխատանքի:

— Իէն, հիմայ հայդա, — դարձաւ Բաղդասարը զոքանչին ու քենիներին, - ազատուողն ազատուեց, դուք էլ ինձ ազատեցէք. Հայդա, բարի ճանապարհ, Ամուս չէ, սպասեցէք, չայ կըխմէք. Ափսոս որ շըկայ, Ճաքարս թրջուել է ծովում, չայի հունձը 2ինու-Մաշինում չեն սկսել դեռ, սամօվարս զողացել են, զուր շըկայ, ածուխ չկայ: Հայդա, գլխիս տէրերը, հայդա, հաւաքեցէք փասսա-փուսսաներդ: Մեծ օգնութիւն արիք կնկաս, տեսայ, շատ ու շատ չնորհակալ եմ... Հայդա, Ահրումանց Բաղդասարը աշքով աշք չունի կանանց տեսնելու... Էրը, ես ձեզ մարդ ասողին...

Հիւրերը, լաւ ճանաշելով տանտիրոջ կոպիտ բնոյթը, շտապեցին հեռանալ:

Այսպէս աշխարհ եկաւ Վարդան Ահրումնանը, նա, որ ապագայում այնպէս հուակեց իւր անոնը և դարձաւ գրեթէ համայն հայութեան նախանձի առարկաներից մէկը...

ՏՏ.

Ուղիդ եօթերորդ օրը Բաղդասարը հրաւիրեց Տէր-Համբարձումին՝ նորածնին «Հալալելու», այսինքն մկրտելու. Կնքահայրը Արքահամ աղա Դալբաշեանն էր, քաղաքի առաջին վաճառականը և ամենից յարգուած քաղաքացին. Միակ մարդն ամբողջ Զիլզիլում, որի հետ Բաղդասարը քիչ թէ շատ բարեկա-

մական յարաբերութիւն ունէր, որին հաւատում էր անպայման, որից նոյն իսկ ակնածում էր:

Առաւօտը կնքահայրն իւր սանիկի ծնողներին ուղարկեց մի գլուխ շաքար, մի փոնտ թէյ և կէս փութ շորայրած միքս: Իսկ ինքը բարեհաճեց զնալ ուղակի և կեղեցի, ուր արդին սպասում էր Հերիք-նազը նորածնին թեսերի վրայ պահած:

Տէր-Համբարձումը մանկանի տուեց Վարդան անոնը, խորապէս համոզուած, որ աւելի յարմար և պատուաւոր անոն չէր կարող դանել Աբրահամ աղայի սանիկի և ամեն բանից դժոհն Բաղդասարի զաւակի համար: Թող սուրբ զօրավարի խաչն ու սուրբ պաշտպաննեն նըան:

Վարդանին տուն բերեցին հետեւել հանդիսով: — Սոզկից գնում էր տիրացուն խաչվառը բարձր պահած, յետոյ Տէր-Համբարձումը շուրջառն ուսերին, խաչը ձեռին, երդելով հանդիսին պատշաճ երդ, այնուհետև ընթանում էր Աբրահամ աղան թեսերի վրայ պահած իւր սանիկին և ձեւներին բանած մի զոյդ վառ մոմեր զոյգը քառասուն կոտէկանոց: Նրանց հետևում էին. Հերիքնազը՝ կոնատակին բանած մի կապոց և ժամբարը՝ մի ձեռում հանդած բուրփառը, միւսում տէր հօր զաւազանն ու Աբրահամ աղայի փափաղը: Աջ ու ձախ կողմերից հանդէսն ուղեկցում էին մի խումբ կիսամերկ ու ոտարորիկ մանուկներ, աշխատելով մի բայլ անգամ յետ շըմնալ Աբրահամ աղայից և միշտ նայելով նրա երեսին այնպէս, որ, կարծես, նա անյայտ աշխարհից եկած մի տարօրի-նակ էակ լինէր: Այն ինչ՝ Աբրահամ աղայի կոներն այնքան յոգնել էին սանիկին պահելուց, որ պատ-քաստ էր նրան ձգել գետնին: Իւր սրտի մաղձը նա թափում էր անկորչ թիկնապահների վրայ, գոռալով, ուսները գետնին զարկելով ու հայոցիկով նրանց

հանդիսին միանգամայն անվայել յիշոցներով։ Նըա ձայնն ազդու էր, քայլուածքը գռող, գէր դէմքի արտայայտութիւնը սպառնալի հաստ բեղերի և թաւ յոնքերի չնորհով։ Մանուկները մի վայրկիան սարսափելով, ցրում էին գէս ու գէն և նորից կամաց կամաց մօտենում, Վերջապէս, հանդէսը հասաւ տուն, մուայլ դարբասը փակումց փողոցաբին մանուկների քթի առջև։

Հիւրերի համար պատրաստել էին թերխաշ ձըւեր, կարագ, մեղր, ալիւրի հալվա, սեր և քաղցր թէլի ու ուսմի խաւնուցդ - մի լմապելիք, որ տեղական բարբառով կոչում էր «վունչ», Բաղդասարը հազել էր իւր մետաքսեայ արխալուղը, մէջքին կապել կապտադոյն մետաքսեայ լայն գօտին։ Ինչե՛ը չէր երևակայում երջանիկ մարդն իւր եօթնօրեայ ժառանգի համար։ Վարդանը կըմեծանայ, կըդառնայ հօր օգնականն ու ընկերն առեսրի մէջ։ ինքն անձամբ ամեն տարի կերթայ «Մակարիա» ապրանք բերելու, հաղարներ կըվաստակի, տներ ու քարվանսարաններ կըշինի, կըդառնայ Զիլզիլ քաղաքի առաջին մարդը, ամենի նախանձի առարկան։ Այ, այն ժամանակ Բաղդասարը իւր թշնամիների աչքը կըհանի։

- Ա մարդ, ինչ ես քթիդ տակ փնթփընթում, —ասաց Գիւլիւմը, որ հագնուած նստած անկողնում, սպասում էր զաւակի վերադարձին, կանգ առ, ա մարդ, հէնց մի դրուս շափշփում ես սենեակը։ Այդ ում ես հայնոյում . . . բաա, ինչու ես ձեռքդ բարձրացնում, ում ես ուզում խփել։ Հիմա ժիծաղում ես, փիէ, ինչ է պատահել . . .

- Նա պիտի մեծ մարդ լինի, շատ մեծ, հասկանո՞ւմ ես . . .

- Ո՞վ . . .

— Եթէ մեծ մարդ շըլինի, ամենից առաջ եօն կըթքեմ նրա երեսին:

— Ում երեսին, ինչ ես ասում:

Կտրիր ձայնդ շուն շան...

Լսուեց Տէր-Համբարձումի զլլի ձայնը, Բաղդասարը վազեց դէպի դռները: Հարևան կտուրները լցուեցին հետաքրքիր կանանցով ու մանուկներով: Սակայն բագում կար մի ահազին թթենի, որի խիտ ճիւղերը խանգարում էին նրանց տեսնել ինչ է կատարում «խոզ» Բաղդասարի տանը:

Ճիւղերը նստեցին նախաճաշի: Տէր-Համբարձումը կերաւ վեց հատ թերխաշ ձու, ասելով, թէ խիստ օգոտակար է ձայնի համար: Բայց թէ ինչ օգոտ ունէր երեք բաժակ փունջն և երկու բաժակ օղին, այս մասին լսեց, բարւոք համարելով ոչնշացնել մեղքն ու կարագը:

Աբրահամ աղան երկու բաժակ փունջից յետոյ բաւական զուարթացաւ և խօսք բաց անելով առետուրի անկման մասին, անցաւ քաղաքական դէպքերին: յայտնեց հեղինակաւոր եղանակով, թէ «ոռուր» մտադիր է լեզգիների հետ հաշիները վերջացնել, ամեն բան պատրաստ է, այսօր-էզուց Զամիլին կը բռնեն ու Գաղատանում նրա տեղը կը նշանակեն: Արդութովին: Յետոյ անցնելով ուրիշ նիւթերի, վերջապէս, հասաւ իւր սանիկի ապագային:

— Գիտես ինչ, Բաղդասար, — ասաց նա, դատարկելով փունջի երրորդ բաժակը, — այն օրից, որ ոռուսը ոտ դըեց մեր կողմերը, ամեն ինչ փոխուեց: Հին կարգերը տակն ու վրայ եղան, նոր կարգեր առաջ եկան: Հիմայ ուսում է հարկաւոր: Լսիր, որդուդ անուսում չը թողնես հաա, էս է ասում եմ, թէ չէ, շատ կը փոշիմանես: Հիմիկուայ ժամանակը անուսում մարդը կէս մարդ է, այն էլ չէ — չեթվերտ մարդ է:

— Եհ, տեսնենք դալիբից ինչ դուրս կը գայ, —
արտասանեց Բաղդասարը և սաստիկ փափառեց մի
թունդ խօսք աւելացնել, բայց յիշելով, որ դիմացի-
նը Արքահամ աղան է, բեղերի մէկը ծալեց դրեց
ատամների տակ:

— Ինչ էլ որ դուրս գայ Վարդանը, զակօնը պի-
տի իմանայ, որ զակօն շիմացաւ, հէշ...

— Ի հարկէ, — մէջ մտաւ Տէր-Համբարձումը, —
առանց զակօնի ինչպէս կարելի է: — Աղա Արքահամ,
— փոխեց նա խօսքը, մի նենգամիտ հայեացը ձգե-
լով կնքահօր ուղարկած շաքարի վրայ, որ ցցուել էր
սենեակի անկիւնում իբրև տնտեսական ապահովու-
թեան նշան, — այս տարի շաքարի մազանդան ոնց է:

— Ճատ թունդ:

— Բահ, բաս ասա ինձ նման անճարներն էլ շայ
շը պիտի խմեն էլի:

Բաղդասարը հասկացաւ տէրհօր խորամանկ ակ-
նարկը և մտքում ասաց. «Վերկինաս, աներեսի միրու-
քը քանդես»:

Տէր հայը մկրտուածին մաղթեց երկար կեանք,
առողջութիւն, մեծ անուն, պատիւ, տոպրակներով
ուկի-արծաթ և այլ շատ ու շատ բարիքներ և «աջա-
համբոյը» դնելով գրպանը, դուրս գնաց. Նրան հե-
տեւց Արքահամ աղան, կրկնելով.

— Մնուսում շը թողնես հա, էս է ասում եմ:

Դիտողների ասելով Վարդանն ոչ մօրն էր նման,
այդ բարի աշքերով, նիհար կնոջը, ոչ հօրը, այդ ամ-
րակազմ, խոժոռ դէմքով, մեծ քթով, հաստ կարսիր
պարանոցով, առողջ մարդուն: Իբր թէ նա նման էր
իւր մօրեղբայր Մարտիրոս Հախվերդեանին, որ ե-
րեք տարի էր բացակայ էր Զիլզիլ քաղաքից: Ճիշդ
էր այս թէ ոչ-դժուար էր ստուգել, բայց մի բան
խիստ աշքի էր ընկնում — Վարդանի աշքերի գոյնը:

Խսկապէս այդ գոյն չէր, այլ զեղնի, կանաչի և կարմրի մի տարօրինակ, չը տեսնուած խառնուրդ։ Այդ աշքիրն երբեմն նայում էին վերին աստիճանի սուր ու ազգու հայեացքով։ Թւում էր, որ մանուկը պատրաստ է արձակուել զիտողի վրայ և կատաղած կատուի պէս ճանկուտել նրա երեսը։

Դիւլիւմը, դոհունակ ժայիտն երեսին, ասում էր, թէ հազիւ աշխարհում մի մանուկ մօր կրծքից կաթն այնպիսի աղաճութեամբ ծծած լինի, որպէս Վարդանը։ Սրդարն, երբ նա կպչում էր մօր կրծքին, մի անյագ, սոսկալի տղրուկ էր, սոսկալի՝ մանաւանդ իւր խոշորութեամբ։ Բիբերն ուղղելով մօր աշքերին, ծծում էր նրա կաթը մինչև վերջին կաթիլ։ Խոկ երբ կաթը վերջանում էր, իւր լնդեզքով կծում էր կերակրից ծիծն այնպէս ամուր, որ մայրը ցաւից աղաղուում էր և շտապում կուլծքն աղատել նրա փոքրիկ, բայց խիստ ամուր ճանկերից։ Օօ, այդ ճանկերը շատ անգամ էին խըռում մայրական կրծքի մէջ և այնտեղ թողնում արիւնային հետքեր։ Մինչդեռ վազրի աշքերը շարունակ նայում էին մօր երեսին հանդիստ, անշարժ, սառցային հայեացքով։

Տասնումէկ ամսական հասակում Վարդանին ծլծից կարեցին։ Մայրն ասաց։

—Փառք Աստուծոյ, հիմա մի րիշ ոյժի կը գամ։ Եյս տղան կաթիս հետ արիւնս էլ ծծեց։

—Տայ Աստուած, այնպիսի տղայ լինի, որ աշխարհի արիւնը ծծի, աֆէրիմ կասեմ, — արտասանեց Քաղղասարը։

—Մի ասա, ա մարդ, մի ասա, մարդիկ աշքով աշք չեն ունենայ նրան տեսներու։

—Թքել եմ մարդկանց վրայ։ Ի՞նչ են նրանք, համ, ինչ։ Խլէզներ, հապա, հապա, խլէզներ։ Ով զոշաղ է, պիտի նրանց ջարդի իւր կրունգներով։

Այ, այդպէս ես խօսում, որ բոլորը քեզ խոզ
են անուանում է, — համարձակուեց նկատել Գիւլիւմը
գուցէ առաջին անգամ իւր կեանքում:

Զայնդ կտրիր, աներես, — կատաղեց Բաղդա-
սարը, — տեսնում եմ, այն օրից, որ ինձ համար տղայ
ես ցզնել, լեզուդ բացուել է: Խոզ եմ, բաս,
ոչխար չեմ, որ ինձ խուզեն ուրիշները: Թող իմ որ-
դին էլ խոզ լինի, միայն ամենքը վախենան նրանից,
ամենքը գլուխ խոնարհեցնեն նրա առաջ...

Երեք տարեկան հասակում Վարդանը կարմրա-
գէմ, կայտառ մանուկ էր, հաստիկ, հիւթալի շըր-
թունքներով, որոնց միջից երեսում էին նրա առաջին
մանկական ատամները: Նրան թոյլ էին տալիս տնից
դուրս գալ իւր քրոջ հսկողութեամբ: Մարիամը, հինգ
տարով եղբօրից մեծ լինելով, կարող էր նրան հո-
գանաւորել: Նա շալակում էր Վարդանին, տանում
փողոց և այնտեղ հետը խաղում, շը թողնելով նրան
միանալ փողոցի երեխաներին, հօր պատուէրի հա-
մաձայն: Սակայն, ինչպէս երեսում էր, Վարդանը Բաղ-
դասարի մարդատեաց բարքը չէր ժառանգել: Ընդ-
հակառակը, նա ձգտում էր խառնուել հասակակից-
ների խմբին և նրանց հետ խաղալ: Նա սիրում էր
խաղալիքներ, հինգ որ մի երեխայի ձեռքում տես-
նում էր որ և է գրաւիչ բան, վաղում էր ու աշխա-
տում խլել նրանից: Այն ինչ՝ ինքն երբէք ոչ մի բան
չէր տալիս ուրիշներին թէկուզ մի քանի վայրկեանով:

Մի օր Բաղդասարը նրա համար շուկայից բե-
րեց մի տափակ տուփ, որի փակ կափարիչի վրայ
կար մի նեղ ծակ հինգ կոպէկանոցի երկայնութեամբ
և տալով որդուն, ասաց.

— Ըհը, առ, ինչոք ձեռքդ փող ընկնի, գցիր
այս գախլի» մէջ:

Այդ օրից ինքը Բաղդասարը գրեթէ ամեն երե-

Դոյ տուփի մէջ գցում էր որեէ պղնձի կամ արծաթի դրամ, այսպիսով որդու համար դրամագլուխ ժողովելով:

— Լսիր, որդի, — ասում էր նա ամեն անգամ, դրամը գրպանից հանելիս, — փող, փող, փող, ոչ բարեկամ, ոչ ազգական, ոչ եղբայր, ոչ քոյր, ոչ մարդկանց պատիւ, ոչ սէր, փող; նա է աշխարհի ոյժը, օրհնուի նրա կտրողի ձեռքը....

Վարդանը լսում էր այս խօսքերը և կամաց կամաց ըմբռնում նրանց իմաստը:

III.

Ճատ շանցած մանուկն իւր տուփը սիրեց աւելի քան բոլոր խաղալիքները, քան բոլոր շըջապատողներին, քան նոյն իսկ հարազատ ծնողներին, նա սեղմում էր իւր զանձը կրծքին այնպիսի գգուանքով, որպէս միայն սիրավառ մայրն իւր զաւակին: Երկու ձեռներով տուփը մօտեցնում էր ականջին, շարժում էր, ականջ դնում մնտաղի ախորժալուր հնչիւններին:

Այս պահերին նրա մանկական դէմքը զըկւում էր անմեղութիւնից, աչքերը վառւում էին ագահութեան անախորժ հրով: Վայ, եթէ մէկն այդ միջոցներին փորձէր ձեռք տալ նրա զանձին, առնէտի պէս ծծվալով, կըյարձակուէր յանդուզն փորձողի վրայ, որպէս զի եղունգներով հանի նրա աչքերը:

Նայելով այդ հազիւ հազ թոթովող մանկանն իւր գանձը կրծքին սեղմած, կարելի էր կարծել, որ նա խանձարուրից արդին ստացել է անխախտելի գաղափար դրամի մասին և գիտէ, որ նա է աշխարհի առանցքը, նրան և միմիայն նրան պիտի կաշել ա-

մթւր, հոգու բոլոր ոյժերով, սրտի բոլոր սիրով, ձեռների բոլոր զօրութեամբ։

Բաղդասարը հոգու խորքում ուրախանում էր, տեսնելով որդու այդ բնազդական սէրը դէպի դրամը այնշափ, որչափ կարող է միայն ուրախանալ միջակ արտիստը, տեսնելով իւր ժառանդի մէջ հանճարի նշոյներ, նա խրախուսում էր որդու մէջ այդ սէրը և աւելի ու աւելի ամրացնում այնտեղ։ Երբեմն զրամը տալիս էր Վարդանին, որ նա ինքն իւր ձեռքով գցի տուփի մէջ։ Եւ մանուկը, մինչև գցելը, խաղում էր զրամի հետ, մի ձեռից միւսի մէջ բաց թողնելով, գլորելով յատակի վրայ, ինչպէս խաղում է կատուն մկան հետ մինչև նրան խեղդելը։

2է, այս տղան փուշ չի դուրս գայ, — ասում էր Բաղդասարը Գիւլիսմին որդու ներկայութեամբ։

Երբ մանուկը վեց տարեկան դարձաւ, հայրը մի երեկոյ վճռեց տուփը բանալ։ Դանակի ծայրով զգոյշ պոկեց կափարիչը։ Յատակի վրայ թափուեցին արծաթի ու պղնձի դրամները։ Վարդանի աշքերը վառուեցին հողեկան անսահման հաճոյքից, ինչպէս կարող էին վառուել մի ուրիշ մանկան աշքերը ըսքանչելի հրավառութիւն տեսնելիս։ Նա ակամայ աղաղակեց։

— Իմս ես, իմս են։

Եւ երկու ձեռներով արձակուեց դրամների վրայ, ինչպէս գիշակերը որսի վրայ։ Մի քանի դրամներ գլորուել էին սենեակի անկիւնը։ Մարիամը շտապեց նրանց գտնել և փորձեց գրպանը դնել։ Մակայն Վարդանը բռնեց նրա ձեռը և այնպէս ամուր կծեց, որ խեղճ աղջիկը ցաւից ճշաց, արտասուեց, բաց թողնելով իւր աւազը։

Բաղդասարը համրեց փողերը, դուրս եկաւ — եքեսուն իննը ըուբլի։

— էէ, — ասաց նա, — հիմտ մտածենք, ինչ պիտի անենք այս փողերը։ Արի, Վարդան, տուր ինձ տոկոսով, մանէթին տասը կոպէկ տարեկան։ Հա, դու զգիտես ինչ ասել է տոկոս։ Լսիր. այս տարի դու ինձ տալիս ես, ասենք, տասը մանէթ...

Եւ նա, մանրամասն բացադրելով տոկոսի նշանակութիւնը, աւելացրեց.

— Հասկացար...

— Հասկացայ, — պատասխանեց խելօք մանուկը, — ես իմ փողերը տոկոսով չեմ տոյ։ Թափիր դախըլի մէջ, տուր ինձ։

Բաղդասարը տուփի կափարիչը առերացրեց և պատուիրեց Վարդանին շարունակել դրամ ժողովելու։

Այժմ Վարդանը վազվզում էր փողոցներում, բագերում ու կտուրներում։ Մարիամն այլ ևս չէր հըսկում նրան և չէր էլ կարող. արդէն նա տանուսէկ տարեկան աղջիկ էր, տեղական սովորութեամբ ալիտի փակուէր տանը։


Բաղդասարը վարձեց մի լեզգի ծառայ, որ պիտի հսկէր Վարդանին։ Օրուայ մեծ մասը մանուկն անց էր կացնում այդ լեռնականի հետ, խոհանոյում, թոնրատանը, բազում, փողոցներում։ Օսմանը — այսպէս էր լեզգու անունը — հասարակ փայտից նրա համար շինում էր խաղալիքներ և երրեմն պատմում նրան զանազան զիպուածներ Դաղստանի կեանքից. Վարդանը նստում էր նրա ուսերի վրայ և պահանջում, որ իրեն զբոսեցնի։ Նա ոտներով անխնայ հարուածում էր Օսմանի կողերին, փորին, փոքրիկ մտրակով զարկում ուսերին, կրծքին, երբեմն երեսին, երևակայելով, որ ձիու վրայ է նստած։ Հպարտ լեռնականը, ներքուատ վրդովութելով, ժայխան երեսին լուռ կրում էր այդ վիրաւորանքները քրիստոնեայի զաւակից։ Եթէ շըկրէր, պիտի զրկուէր պաշտօնից։

293

այսինքն՝ ամսական երեք ըուբլուց և մի փոքր հացից. նա ինքն էլ հայր էր, ունէր Վարդանի հասակի մի տղայ և երկու աղջիկ, որոնց թողել էր Դաղստանի լեռներում իւր կնոջ հետ. Յիշում էր զաւակներին և հառաչելով շփում կոշտացած ճակատը, որ իւր ծննդավայրի ժայռերի խորշոմներն ունէր. Երբեմն, յոգնելով փոքրիկ բռնակալին ուսերի վրայ զրօսեցնելուց, բաց էր թողնում նրան հարեան մանուկների շրջանը և ինքը հեռուից հետեւում նրան. Վարդանը մեծ մասսամբ ընկերանում էր այնպիսի մանուկների հետ, որոնք հետ էին և սիրով կատարում էին նրա կամքը կամ թոյլ էին տալիս իրանց հարստահարել. Նրա ոսկէզօծ քամարը, սատինի արխալուղը, մանաւանդ հապօյկա, կօշիկները փայլոն անկարուրդներով ընկերներին ներշնչում էին յարգանքի զգացում, միննոյն ժամանակ, շարժելով նրանց նախանձը. Նա շատ անդամ անպատիժ խլում էր սրա ու նրա ձեռքից մի որեէ գնդակ, թոռւցիկ կամ վէգ, հայնոյում էր կամ ծեծում, իսկ երբ յանդգնում էին իւր վրայ ձեռք բարձրացնել, աղաղակելով վազում էր Օսմանի մօտ. Եւ եթէ լեզգի ծառան բարեսիրտ չըլինէր, կատարէր փոքրիկ բռնակալի հրամանները, բոլոր մանուկները վաղուց հաշմանդամ կըդառնային. այնքան խիստ էր Վարդանը. Սակայն պատահում էր, որ նրան պաշարում էր վեհանձնութեան զգացումը. Այսպիսի հազուաղէպ ըովէններին ընկերներին տալիս էր ծտի կտուցի շափ հալքա, մի քանի մսխալ աղանձ կամ մի խնձոր տասը կտորների բաժանած:

Նա միշտ գրպանում փող էր պահում ու պարծանքով ցոյց տալիս ընկերներին:

Ամառուայ սկզբին Օսմանը, շոքերին չղիւանալով, գնաց իւր հայրենիքը աշնանը վերադառնալու պայմանով. Վարդանը մասց անպաշտպան, կըճատեց ՀՈՒՄԱՐ



իւր յարաբերութիւնները ընկերների հետ, ամփոփուեց ինքն իւր մէջ և աւելի սիրեց իւր տուփը: Ըյժմ մտածում էր միայն իւր գանձն աւելացնելու մասին: Ճշմարիտ է, հայրը գրեթէ ամեն երեկոյ գըցում էր տուփի մէջ որ և է դրամ, բայց տարիներ պիտի անցնէին մինչև նրա լցուելը: Եւ ահա Վարդանը գտաւ վող վաստակելու միջոց և սկսեց գործադրել ծնողներից թագուն:

Մի երեկոյ Բաղդասարը տանն ինչ-որ հաշիւներ էր անում, իսկ Դիւլիւմը Վարդանի համար մետաքսեայ շապիկ էր կարում, երբ միւս սենեակից վազեց Մարիամը և շնչաց:

—Գնացէք, տեսէք Վարդանն ինչ է անում...

Մարդ ու կին մօտեցան զոններին: Նրանց աշքերին ներկայացաւ հետևեալ տեսարանը. միւս սենեակի անկիւնում Վարդանը, վառ մոմը առջեր զըրած, համարում էր մի բուռն արծաթէ ու պկնձէ զբաներ: Նա այնքան էր խորասուզուած իւր դրադմունքի մէջ, որ ծնողների մերձաւորութիւնը շըզգաց: Նրա մանկական ճակատը խորշումել էր, շըթունքները սեղմուել էին, ձեռները յուզումից դողում էին: Համբելով բոլոր դրամները, ձեռը դրեց ճակատին, նայեց առաստաղին—ինչ հիանալի նիւթ նկարչի համար: Ցետոյ նորից սկսեց համբել, նորից ձեռը դրեց ճակատին: Պարզ էր, որ հաշիւն ուղիղ շէր գալիս: Եւ որքան աւելի էր համրում վողն, այնքան ձեռների դողոցն աւելանում էր, ականջներն ու այտերը կարմրում էին, շունչը սաստկանում: Այս եօթություն տարեկան մանուկը սենեակի լուռթեան մէջ, աղօտ լուսոյ առջեւ, յիշեցնում էր այն աւանդական ազահին, որ մեն-մենակ խուլ գիշերները ստուգում է իւր գանձը, հըճւում ոսկու հնշիւնով, լուռ խօսում նրա հետ, որպէս մենասէր փիլիսոփան իւր մտքերի հետ:

— Հրաշք է, տղայ չէ, — անգիտակցաբար շնչաց
Բաղդասարը, կնոջ թմբից քաշելով:

Նա կամացուկ մօտեցաւ որդուն: Վարդանը զը-
լուկսը բարձրացրեց և, իսկոյն երկու ձեռներով փո-
ղերը թագցնելով, գոշեց.

— Զեմ տայ, չեմ տայ, ոչ ոքի չեմ տայ...

Նրա ձայնը, աշքերը, ամբողջ կերպարանքն ար-
տայայտում էին եօթանասուն տարեկան ժամանակին:

— Ո՞րտեղից են այդ փողերը, — հարցրեց հայը:

— Զեմ ասի, կըծեծես ինձ:

— Դախըլից ես հանել:

— Չէ, Աստուած վկայ, չէ, ես եմ հաւաքել, իմ
աշխատած փողերն են:

— Քո աշխատած: Դու ինչպէս ես փող աշխա-
տում: Ասա, թէ չէ կըծեծեմ...

Վարդանը ստիպուեց գաղտնիքը բացադրել: Բանն
այն է, որ մայրը գրեթէ ամեն օր նրան ուղարկում
է մերձակայ խանութները՝ գնելու զանազան մանր-
մունք պարագաներ տան համար. սապոն, մոմ, լե-
ղակ, լուցկի, մածոն և այլն: Վարդանն ամեն անդամ
աշխատում է մի մի, երկու-երկու կոպէկ յետ դցել
իւր համար, և ահա գոյացել է այս դումարը:

— Խելօք տղայ, խելօք տղայ, — զոշեց Բաղդա-
սարը հիացած:

— Ուրեմն, գողութիւն ես արել, — հարցրեց Գիւ-
լիւմը, որ միանգամայն համաձայն չէր ամուսնու
հայեացքին որդու արարքի վերաբերմամբ:

— Իսկի էլ գողութիւն չէ, առուստուր է, — պա-
տասխանեց Վարդանն ամենալուրջ եղանակով, — բախ-
կալից տռել եմ էժան, քեզ ծախել եմ թանգ: Առու-
տուրականներն էլ այսպէս են փող աշխատում:

—Կերած, —գոչեց Բաղդասարը, միանգամայն յա-
վըշտակուելով որդու խելացի պատասխանով:
Եւ, համբուրելով նրա ճակատը, կրկնեց.
—Խելօք տղայ, խելօք տղայ...

I.V.

Առաջիկայ աշնան սկզբին Բաղդասարն որոշեց
Վարդանին տալ ուսումնարան։ Մի առաւօտ մանկա-
նը զարթեցրին կանուխ։ Մայըն ամրապնդեց նրա-
որովայնը մի զոյգ ձուով, կարագ ու մեղրով և, օրհ-
նելով, յանձնեց հօրը։

Ճանապարհին Բաղդասարն ամբողջ ժամանակ
խրատում էր Վարդանին, բացադրելով ուսման նշա-
նակութիւնը։

—Տես, որդի, —ճառաբանում էր նա, —աշխարհն
այ, օրինակ, այս չինարի պէս մի ծառ է։ Մարդիկ
որդներ են, նստած, ուտում են ծառը։ Որդ կայ, որ
դոչաղ է։ Նա համ շատ շատ է ուտում համ շուտ
շուտ։ Որդ կայ, որ տեղից չը գիտէ շարժուել։ Նա
քաղծից սատկում է։ Ուտելու համար ատամներ են։
Հարկաւոր։ Մարդուս խելքը նրա ատամներն են։ Ու-
սումը որ կայ մի սրոց է, իմացիր հան, ատամների
սրոց։ Եթէ անուսում խելօքն արժէ հինգ յիմարի,
ուսում առած խելօքը տամն անուսում խելօքի ար-
ժէ։ Ուսում առած մարդուն խարելը շատ դժուար է։
Նա ինքն ուրիշներին կը խարէ։ Հիմայ քեզ տանում
եմ ուսումնարան, փող եմ ծախսելու հան, հեշտ շի-
մանաս։ Աֆարիմ չեմ ասի, եթէ երկու-երեք տարուց
յետոյ Կօնսիստօրի՝ սեկրետար Ղահարման-բէդի պէս
ուսուերէն չը կոտրատես ու նրա նման ինդիրներ չը
գըես։ Ասենք, Ղահարմանիդ էլ հէրը զօռբէզօռ լինի,
ինչ մարդ է, այն օրը շիթ առնելիս տամներեք կո-

պէկս կերաւ, բայց ասում եմ էլի, մարդ ամեն բան պէտք է իմանայ: Հէնց որ ուսումդ վերջացըիը, քեզ Աբրահամ աղայի եղրօր հսրայէլի հետ ուղարկելու եմ Մակարիա, որ ապրանք առնես հան, լաւ իմացիք: Այ, այն ժամանակ զուխտ ձեռներովս կը հանեմ թըշնամիներիս աշքը: Էլը, ես նրանց հօր, պապերի, եօթը պորտի գերեզմանները տակն ու վրայ անեմ...

Վարդանը գլուխը քաշ լսում էր հօր խօսքերը, ամուր բռնած նրա ձեռը և մի քայլին երկուսն անելով, հաղիւ կարողանում էր հաւասար ընթանալ նրա հետ, Մերթ ընդ մերթ Բաղդասարը, այս կամ այն խըատը որդու մտքում ամուր դրոշմելու համար, այնպէս պինդ էր սեղմում նրա ձեռը, որ մանուկը քիչ էր մնում ցաւից գոռայ:

Ուսումնարանում, — շարունակեց հայրը, — ոչ ոքի հետ չը կուտես, բայց ոչ ոքի հետ էլ շընկերանաս: Գլուխդ քաշ բանիդ կաց: Ընկերներից օգուտ չը կայ, վնաս կարող է լինել, ևս առաւել աղքատ ընկերներից: Մէկը գրիշ կուգէ, միւսը թուղթ, թանք, էլ չը գիտեմ ինչ: Ասեղ չը տաս, որ աշքները կոխեն, իմանում ես, ասեղ չը տաս շան որդիներին: Դէհ, հասանը ուսումնարան, տեսնենք վերջդ ինչ է մինելու...

Ճիշդ այս պահին Վարդանն երկու անգամ փուլշտաց: Որովհետև գիտէր, որ զոյգ փոշտոցը խէր է, իսկ կէնտը շառ, շրթունքները սեղմեց, քթի ծակերը մատներով փակեց և երրորդ փոշտոցը զսպեց:

— Փառք Աստծու, — գոհ եղաւ Բաղդասարը:

Ուսումնարանը գտնւում էր քաղաքի վերին կողմում, ուսաւաց թաղում: Այդ մի հասարակ մէկ ու կէս յարկանի շինութիւն էր, զրսից պատերը կաւով սպիտակացրած: Հարեան տներից նա տարբերւում էր նրանով միայն, որ լուսամուտները երկաթէ ցանցեր

շունէին, երկի, այն պատճառով, որ ներսում գողերի համար հրապուրից բան չը կար:

Դոների առջև Բաղդասարն իւր գոյնզգոյն մեծ թաշկինակով սրբեց Կարդանի քիթը, որի ծայրն, ի դէպս ասած, այն ժամանակ հիւթաւորուելու վատ սովորութիւնն ունէր. Հայր ու որդի մտան մի ընդարձակ բագ, որի երկու կողմերը ներկայացնում էին բաց տարածութիւն տախտակեայ պարսպով շրջապատուած: Դասինը դեռ չէին սկսուել, աշակերտները վազվզում էին բազում. Տեսչի խոհանոցի առջև զրունում էին երեք-չորս զոյգ սագեր ու երկու հնդկահաւ, գլուխները հպարտ հպարտ վեր ցցած ինչպէս գաւառական չինոլինիկներ: Նրանց ոտները թաց գետնի վրայ թողնում էին եռանկիւնի հետքեր, կարծես, բլիթ էին նախշում: Մի քանի բազեր զուարճանում էին գետնի մէջ փորած աւազանում, կոցահարելով կեղտոտ ջրի մակերեսոյթում լողացող փիթած վարունգնու սեխի կճեպները: Տեսներով անծանօթ դէմքեր, մի հնդկահաւ, կտուցը ցցած, վագեց առաջ, կարծես, հաշիւ պահանջելու: Բաղդասարը շուխայի երկայն թևերով փախցրեց անհիւրընկալ թոշնին, մըտքում մի ազգու յիշոց ուղղելով նրա տիրոջ հասցէին:

Սշակերտներն իսկոյն շրջապատեցին նորեկին, Այստեղ կային մի քանի ազգերի, կրօնների ու ազանդների մանուկներ: Իւրաքանչիւրը հագնուած էր իւր ծնողների քէֆով ու նրանց կարողութեան համեմատ, ուստի խումբը ներկայացնում էր տարազների մի նկարչական խառնուրդ:

—Մեարթին Բաղդանըշը չայ է խմում, —ասաց մի թուրք աշակերտ:

—Քեզ հարցնող չը կայ. —բարկացաւ Բաղդասարը և, շուխայի թևերը ուսիրին գցելով, նստեց, Թւսումարանի առջև զըած նստարանի վրայ:

Սշակերտները նրա առջև կազմեցին կիսաշրջան
և սկսեցին ոտից մինչև դլուխ դիտել Կարդանին։
Յանկարծ Բաղդասարը, դլուխը ցած թեքելով, շըր-
ջանի արանքով նայեց հեռու կանգնած մի մանկան։

—Պղտիկ, ա պղտիկ, —ասաց, —մին առաջ եկ,
ոեխդ տեսնեմ։

Մանուկը մօտեցաւ, արխալուղի թեր ատամներով՝
կուծուելով։

—Աղա, դու փալան կարող Օհանի թոռը չես,
երկաթ ծախող Ասատուրի տղան։

—Այն, —պատախանեց մանուկը ամաշելով։

—Աղա, մէջքիդ արծաթի քամար ես կապել։
Փահ, փահ, ախար հայրդ սովորագար է, ըըը, ես նրա
հօր ոսկորները... Դու էլ ես ուսում առնում... Փահ
փահ, աշխարհը լուսաւորուեց, պրծաւ։ Անունդ ինչ է։

—Լեռն...։

—Օհօ, բաս ասա Լեռն թագաւորի քթի ծակիցն
ես ընկել, ըըը ես քո պապի փալանը...։

Սշակերտները հըռ հըռ ծիծագեցին միահամուռ։

Վերջապէս, ուսումնարանի պահապան Անդրէասը
ազդարարեց։ Թէ Մարտին Բաղդանիշը գալիս է։ Մի
քանի վայրկեանում բաղը դատարկուեց, աշակերտ-
ները վաղեցին դասարանները։ Բաղդասարը ոտքի
կանգնեց, չուխայի թերը ցած զցելով ի նշան յար-
կանքի և խոնարհութեան։

Երկդասեան ուսումնարանի տեսուչ Մարտին
Բաղդանիշը միջին հասակից քիշ բարձր մի մարդ էր,
երեսը շեշտա, կոտած բեղերով ու կարճ միրուքով,
որ ծնօտի վրայ երեք մատնաշափ սափրած էր։ Նրա
աջ այտի վրայ կար ինչ-որ բուժուած վէլքի հետք
հինգ կոպէկանոցի մեծութեամբ, որ նրա դէմքին
տալիս էր դաժանութիւն։ Իրօք դժուար էր որոշել
այդ մարդու տարիքը, որովհետև թէս միրուքը ալ-

խառն էր, բայց զլիսի մազերը տակաւին ու էին, թէև, ատամները փթած ու սևացած էին, բայց քայլուածքն ունէր պատանեկական աշխոյժ, ձայնը երիտասարդական հնչին, իսկ կոտած բեղերը թամրաքուի գոյն ունէին, երեխ, այն պատճառով, որ ծխախոտը ծխում էր առանց մունդշտուկի: Այս վերջին հանգամանքն ապացուցում էր նաև նրա աջ ձեռի միջին մատի ու ցուցամատի դեղնութիւնով:

Նա մտաւ դասարան զլուսն առաջ թեքած. կարսի էր կարծել, որ մի աներեւոյթ ձեռ կմշտում է նրա պարանոցը:

— Վզին դիմբալ ունի, — շնչաց Վարդանը հօր ականջին:

— Մուս, — սաստեց Բաղդասարը, — գլուխ տուր, հարամզադա:

Հայր ու որդի անմիջապէս հետևեցին տեսչին. Սկզբում Բաղդասարը մի քիշ շփոթուեց նրա դեղին կոճակներից, բայց, յիշելով, որ երկու տարի առաջ նրան ծախել է մունդիրի համար երեք արշին կապոյտ մահուդ, հազեց ու մոքում ասաց. «քո հէրն էլ անիծեմ»:

— Բարով ես եկել. — ասաց տեսուչը, — ինչ կը հրամայես: Որդուդ ես բերել: Հա, լաւ, շատ լաւ, ուսում է կրտանք էլի: Մուս, զարշելիներ: Խոնարհ տղայի է նման: Իսկի գըել-կարդալ շրգիտէ: Ոչինչ, շուտով կըսովորեցնենք...

Մինչ բանակցութիւնը շարունակում իր, աշակերտները սկսեցին թագուն-թագուն շարութիւններ անել: Նրանք զանազան միմոսութիւններով աշխատում էին միմեանց ծիծաղեցնել, բօթում էին իրարու, խտղտում, թղթի գնդակներ արձակում միմեանց վրայ: Առանձնապէս աշքի էր ընկնում թուխ դէմքով ու ծուռ քթով մի աշակերտ: Նա այնքան ճարպիկ

էր, որ ձեռնասուն կապկի պէս կըկզում էր արա ու նրա ուսերին կամ գլուխը դնում նստարանի վրայ, ստները ցցում օդի մէջ, հէնց որ տեսուչն երեսը մի կողմ էր դարձնում:

Բանակցութիւնը Վարդանի մասին վաղուց վերջացած կըլինէր, եթէ Մարտին Բաղդանիշը բարեկամաբար շըհետաքըքուէր Բաղդասարի մասնաւոր գործերով: Այս էլ վերջացնելով, նա սկսեց զանգատուել պարանոցի խոցից:

— Աղբէր, մի շաբաթ է քունս կտրուել է, անիբաւը ասեղի պէս է ծակում վիզս: Մո՛ւս, գարշելիներ: Գլուխը վերև բարձրացնել շեմ կարողանում:

Ես ճարը գիտեմ,—ասաց Բաղդասարը, — վերցրու մի զլուխ սոխ, միջից կէս արա, վըէն դիր այծի փիհ, կըակի վրայ լաւ սիրուն խորովիը, յետոյ տաք տաք դիր տիմբալիդ վրայ ու կապիր: Համցաւը կըկտրի, համ էլ շիրքը կըքաշէ...

Այդ սլահին բիթըծուռ աշակերտը ինչ - որ բարդ սաբումօրտայլ էր ուզում անել: Հաւասարակըութիւնը կորցըեց ու նստարանից լնկաւ յատակը, բարձրացնելով ահագին դղբդոց ու թանձը փոշի:

Աշակերտները միաձայն բըրջացին:

— Այդ ով էր, — գոչեց Մարտին Բաղդանիշը, — էհէ, էլի դու, գարշելիներից գարշելի Մկիշ 2ախմախշեան: Դէհ, առաջ եկ, տեսնեմ, առաջ եկ, առում եմ, իժ օձի զաւակ...

Քիթըծուռ Մկիշը, կըակոտ աշքերը տեսչի երեսին յառած, անշարժ էր: Դիտէր ինչու համար են իրան կանչում: Մարտին Բաղդանիշը, մի ձեռը վըզին դրած, միւտով քանոնը բարձրացրած, մօտեցաւ նրան: Մկիշը փախաւ, ծեսուչը վազեց նրա ետևից, վիզը թեք պահած: Մանուկը բարձրացաւ նստարանների վրայ: Ծեսուչը աջողեց բռնել նրա արխալուղի

ԳԵՂՔ: Սակայն Մկիշը դուքս պկուեց, արխալուղը թողնելով տեսչի ձեռքում, և տկրոր թռաւ լուսամտով փողոց։

—Տղերք, բոնեցէք այդ դարշելուն, —հրամայեց տեսուչը։

Մի խումբ աշակերտներ, մեծ մասամբ մալականներ, վազեցին նրա հրամանը կատարելու։

—Եյ տեսնում էք, պարոն Բաղդասար, ինչ սատանաներ են, գանգատուեց Մարտին Բաղդանիշը, վղի ցաւից չըկարողանալով իւր հայեացքը Բաղդասարի գօտիից աւելի վերև բարձրացնել, —հոգիս են հանում դարշելիները, հոգիս։ Մեր պահապան Անդրէասի որդին է, երեք անդամ վլոնդել եմ, էլի ընդունել, ի՞նչ անեմ, հայրը խեղճ մարդ է, գալիս է, ոտներիս ընկնում, աղաշում, լաց լինում։ Գաղանին հազար կրթիր, հէջ մարդ կըդառնայ։ Ինչպէս հրամայեցիք։ Սոխը խորովել, այծի փիհ, պինդ կապել, ծնորհակալ եմ։ Սուս, անիրաւագոյն աւանակներ...

Ներս բերեցին Մկիշին մի կողմից աշակերտները բռնած, միւս կողմից Անդրէասը։

—Մարտին Բաղդանիչ, —ասաց հայրը. —դրա Աստուածը ոօզգին է, տուր որ կըտաս փափուկ տեղերին, հոգիս բողազս բերաւ։

Այն ժամանակները արքունական դպրոցներում ծեծն արգելուած չէր, և Մարտին Բաղդանիչն ամենայն հաճոյքով գործադրում էր իւր իրաւունքը, հաստատ համոզուած, որ ծեծից աւելի զօրեղ կըթութեան միջոց չըկայ։ Նա Մկիշի ձեռների ափերին տուեց տասներկու հարուած, արտասանելով. «դարշելի, մէկ, գարշելի, երկու, գարշելի, երեք, աւանակ, շորս, շան ձագ, հինգ և այլն...»

Մանուկը գոռալով զնաց իւր տեղը, ձեռները ծոցը դրած։ Սակայն երկու ըոպէ շանցած, արխա-

լուղը հագաւ և, դեռ աշքերի արտասուրը շըցամքած, սկսեց ծամածութիւններ անել տեսչի, Բաղդասարի նոյն իսկ իւր հօր ետևից:

Եթեծի տէսարանը Վարդանի վրայ խոր տպաւորութիւն գործեց: Նա մտքում երդուեց երբէք տեսչի բարկութիւնն իւր գէմ շըգբգոել:

▼.

Առաջին տարի Վարդանն ուսման մէջ ցոյց տըւեց բաւական շնորք: Սովորեց կարդալ ոուսերէն ու հայերէն, նաև մի փոքր գըել: Նա ամեն երեկոյ դասերը կրկնում էր հօր մօտ և արժանանում նրա գովասանքին: Սակայն յանկարծ նրա բանականութիւնը կանգ առաւ, որպէս կամակոը էշ զետի մէջտեղում և, կարծես, այլ ևս չէր ուզում առաջ երթալ: Բայց և այնպէս մանուկն իբնէ աշխատասէր էր. առնելով ձեռը ամենակարող համբերութեան մտրակը, սկսեց առաջ քշել բանականութիւնը, անխնայ հարուածելով նրան: Եւ այն, ինչ-որ ընդունակ աշակերտները իւրացնում էին առանց դժուարութեան, Վարդանը ձեռք էր բերում քըտինքով, բառի բուն մտքով: Միայն մի առարկայում նա ընդունակութիւն ցոյց տուեց — թուաբանութեան մէջ: Արդէն տանը, անդադար համբելով իւր փողերը, նա ընտելացել էր թուաբանութեան շորս կանոներին:

Վարդանի դասարանական հարևանը ձախ կողմից զինագործ Կարապետի որդի Մինասն էր: Ճէկ մազերով. հեզ, նիհար, հիւանդոտ զէմքով մի բարեսիրտ և ընդունակ մանուկ: Հազնուում էր նա շատ աղքատ, կապոյտ կտաւից կարած արխալուղը կրծքի կողմում կարկատած էր մի քանի տեղ, իսկ նոյն դոյնի վարտիկն այնքան կարճ էր. որ ասուեայ կոշտ

զուլպաների վերսից երևում էին նրա նիհարիկ սրունդ-ները: Նա մէջքին կապում էր հաստ ասուեայ գօտի: միակ բանը, որ պաշտպանում էր նրան ցըտից: Սակայն իւր ցնցոտիների մէջ նա միշտ մաքուր էր մարմնով աւելի քան ով և է աշակերտներից: Նրան անխափիր սիրում էին բոլոր աշակերտները, որովհետև երբէք ոչ ոքի անախորժութիւն չէր պատճառում, ոչ ոքի չէր նախանձում և ոչ ոքի չէր մերժում իւր օգնութիւնը, եթէ կարող էր մի որ և է բանով օգտակար լինել: Իւր համեստ նախաճաշը, որ մեծ մասմբ բաղկանում էր հաց ու պանրից, երբէք մենակ չէր ուտում: Հէնց առաջին օրը նա սկսեց օդնել Վարդանին դասերի մէջ: Անա ինչու Վարդանը ընկերացաւ նրա հետ և սիրեց նրան, ի հարկէ, այնչափ, որշափ ընդունակ էր սիրելու:

Մինասի կատարեալ հակապատկերն էր ներկայացնում Վարդանի աջ կողմի հարեանը: Դա գդակ կարող Աթանասի որդի Մարտիրոսն էր: Նրա հակակը բերանը, նեղ ճակատի տակից միշտ գողնովի նայող աշքերը, ագուալի կտուցի նման սուր քիթը արտայայտում էին քսու, նախանձու և կըքոտ հոգի: Նրա ամենասիրելի գուարճութիւնն էր՝ միշտ կմշտել իւր ընկերներին, միշտ դաւաճանել նրանց, միշտ նրանց մանկական շարութիւնների մասին զեկուցանել ուսուցիչներին կամ տեսչին: Հէնց առաջին օրը նա մի երկու անդամ Վարդանին կմշտեց, կարծես, փորձելու համար, արդեօք, նորեկի մարմինը իւր հարեանութեանը դիմանալու չափ ամուր է: Վարդանն ոշինչ շասաց, բայց մտքում որոշեց զգոյշ լինել նրա հետ:

Այժմ Բաղդասարը հրամայել էր որդուն ամեն օր ճաշից յետոյ զալ խանութ: Նա ուզում էր Վարդանին փոքր առ փոքր ծանօթացնել առետրական գործերին:

Խանութը գտնուում էր Զիլզիլ քաղաքի ստորին մասում, մի ծածկուած քարվանսարայում։ Այդ մի ոչ այնքան մեծ սենեակ էր երկու մասերի բաժանուած։ Ետևի մասը բռնուած էր դեռ շըբացուած ապրանքների հակերով։ առջևի մասը ներկայացնուած էր բուն խանութը։ Այստեղ ապրանքը դարսուած էր յատակի վրայ, պատերի տակ, որովհետև այն երանելի ժամանակները Զիլզիլ քաղաքում այժմեան մաղաղինների դարանների մասին գաղափար չունէին։ Բաղդասարը սովորաբար նստում էր խանութի մէջ տեղում, մինդարի վրայ կամ պարսկի ձեռվ չոքում, առջեն ունենալով պարսկական կէս գազը ու մի կեղտոտ համարակալ, որ տեղ տեղ յիշեցնում էր պառաւի ատամներ իւր հատիկների պակասով։ Վարդանը նստում էր դրների առջե, սաքուի վրայ։ Մուշտարին գալիս իսկոյն ոտքի էր կանգնում, ձեռները դնում կրծքին ու սպասում հօր հրամաններին։ Նա օգնում էր Բաղդասարին շթի կտորները բաց անելում ու ծալելում, ծախած ապրանքը փաթաթելում։ Նա աւելում էր խանութը, մուշտարիններին խմելու ջուր էր տալիս, կրակ էր դնում նըանց ծխաքարշի վրայ և այլ այսպիսի մանր ծառալութիւններ մատուցանում։

Ճուտով Բաղդասարը յանձնարարեց նըան՝ վաճառել ապրանքի հակերից մնացած խսիրներն ու պարանները։ Գոյացած փողերի կէսը պիտի տար հօրը, իսկ միւս կէսը գցէր իւր տուփի մէջ։ Այս առաջին գործում Վարդանը ցոյց տուեց զարմանալի առևտրական ձիրք։ Հէնց որ հեռուից տեսնում էր մուշտարուն, շտապում էր դուրս թռչել, ցցուել նըառուց, դէմքից արդէն գուշակելով եկողին ինչ ապրանք է հարկաւոր։ Նա իւր խսիրներն ու պարանները, նաև կոտրտուած արկղերը գովարանում էր

այնպիսի ջերմեռանդութեամբ, որպէս պարսիկ դար-
վիշները ամեն օր խանութների առջև փառարանում
էին Ռուստէմի Զալի ասպազէնը:

Երեկոները, երբ առուտուրը վերջանում էր, Վար-
դանը կողպում էր խանութի դռները և, բանալիները
վերցնելով, հօր հետ տուն վերադառնում: Այդ մի-
ջոցներին կարելի էր նրա դէմքի վրայ նշմարել ա-
ռանձին լրջութիւն, որով խիստ տարբերում էր
փողոցներում վազվզող անհոգ մանուկներից: Նա
ինքը զգում էր իւր առաւելութիւնը, և այս զգա-
ցումը նա արտայայտում էր բանալիների միջո-
ցով, որոնց զըրնգացնում էր կատաղի կերպով, ըն-
կերներին տեսնելիս: Տանը նա հօրը ենթարկում էր
մանրամասն հարց ու փորձի այս կամ այն ապրանքի
մասին: Խսկ հայրը հրճում էր, տեսնելով որդուն
այդչափ հետաքրքիր և հարցասէր:

Կարճ միջոցում Վարդանն այնքան սիրեց վա-
ճառականութիւնը, որ ուսումնարանն էլ դարձրեց
իւր համար մի տեսակ շուկայ: Սկսեց աշակերտներին
վաճառել ամեն ինչ, որ կարող էր վաճառել, ընկոյզ,
շաքանակ, աղանձ, հալվա, եփած սիսեռ, փոխինձ
և այլն: Երբեմն պաքսիմատը փաթաթում էր թղթի
մէջ, քարով ծեծում, մանրացնում, խառնում շաքա-
րի հետ ու պտղուցը մի կոպէկով ծախում: Առետու-
րը նրան աւելի էր զբաղեցնում, քան նոյն խսկ ըն-
կերական խաղերը: Այս առիթով քիթըծուռ Մկիցը
նրան ենթարկում էր ամենակծու հեղնութեան, ի
հարկէ, աւելի գործով, քան խօսքով: Անդուդ շարա-
ճին Վարդանի համար դարձաւ կատարեալ երկնա-
յին պատիժ: Ինչ ասես անում էր փոքրիկ վաճառա-
կանին կատարեցնելու համար: Խլում էր ձեռքից
«ապրանքը», վազում, բարձրանում ուսումնարանի
կտուրը, նատում եղրին, ոտները ցած գցելով, և

նրա աշքի առջեւ անում անվան, աղանձը, փոխինձը, Երբեմն հաւաքում էր իւր շուրջը ընկերներին և աւարը բաժանում նրանց. Յետոյ իւրաքանչիւրին տալիս էր մի մի թղթեայ կոպէկանոց և պատուիրում վճարել Վարդանին. Աշակերտները, ծիծագելով ու ուտոստալով, մօտենում էին վաճառականին ու ասում.

—Սովորագար, առ ապրանքիդ զինը:

Մակայն այս բոլորը Վարդանին չէր վհատեցնում. Հակառակ իւր հօր սկզբունքին, նա բնաղդաբար հասկանում էր, որ միայն մարդկանց բարեկամութիւնը կարելի է շահագործել, իսկ մարդատեցութիւնից օգուտ շրկայ. Ուստի աշխատում էր ոչ ոքի հետ շրկորել իւր յարաբերութիւնը. Միննոյն ժամանակ, ոչ ոքի վատութիւնը չէր մոռանում և յարմար միջոցին վը-ըէժն առնում էր իւրովի. Այսպէս, օրինակ, մի անգամ գանգրահեր Լեռնը, փալան կարողի թոռը, որ մոռացել էր տնից նախաճաշ բերելու, սաստիկ քաղցզալով, խնդրեց նրանից մի կտոր հաց ու պանիր. Վարդանը մի օր նրանից ծաղրուել էր և այդ օրից ոխ էր պահում նրա դէմ. Նա իւր հացի կտորը բաժանեց երկու մասերի, մի մասի վրայ դրեց համեղ պանիրը ու ասաց. «առ կեր», չագիւ Լեռնը ձեռը մեկնել էր, Վարդանը հացը ձգեց կեղտոտ աւազանի մէջ, ասելով. «վերցըու, կեր», Յետոյ սկսեց իւր բաժինը խպշտել, քաղցած ընկերոջ ախորժակը բորբոքելով անողոք սառնասրտութեամբ:

Մի օր նա ուսումնաբան բերեց ծախելու տապ հատ փայտեայ գդալներ. Օսմանը չնորքով մարդ էր. նա էր շինել այդ գդալները. Որպէս զի քիթըծուռ Մկիշը շըխանգարի իրան, Վարդանը մի գդալ նուիրեց նրան — առաջին նուէրն իւր կեանքում. Այն ժամանակ Մկիշն ինքն յանձն առաւ ծախել «ապրանքը»:

—Մածոն ուտելու զդալ, մածոն ուտելու զբալ, - վազվելով բագում, գոռում էր նա, - ով է ուզում, հատը երկու կոպէկ:

Կէս ժամում բոլոր զդալները վաճառեց և փողերը յանձնեց Վարդանին:

Զատիկի օրը Բաղդասարը Մարտին Բաղդանիշի համար ուղարկեց մտքում խոստացած մի զլուս շաքարը և մի փունիթ թէյը, աւելացնելով կէս դիւժին կօլենկօրի թաշկինակ: Ցետոյ ինքը բարեհաճեց զընալ անձամբ տեսչի մօտ՝ տօնը չնորհաւորելու —միակ այցելութիւնը, որ այդ օրն արաւ, բացի, ի հարկէ, Աբրահամ աղայից: Մարտին Բաղդանիշն ընդունեց նրան խորին յարգանքով և բարեկամաբար յանդիմանեց: Աստուած վկայ, նա չէր ընդունի այդ նուէըր, եթէ իմանար, որ աղա Բաղդասարը շի վիրաւորուիլ: Խօսեցին Վարդանի մասին:

—Աչքիս լուսի պէս եմ սիրում: Զատ խոնարհ տղայ է, արաբքներից երեսում է, որ լաւ օջախի որդի է: Մինչև օրս մի անգամ էլ չեմ ծեծել: Իսկ ես, ինչու մեղքս թագցնեմ, սիրում եմ երբեմն փոքրիկներին ծվծվացնել, մեծերին կարցեր նստեցնել: Զատ էլ աշխատասէր է, Պօղոս-Պետրոսը վկայ: Պաժալստա, ծխեցէք, երևելի թիւթին է, Սամսոնի իսկական դիւրեկ է: Աշակերտներիցս մէկի հայրն է ուղարկում ինձ: 2է, Աստուած պահի, լաւ որդի ունիք: Իսկի ընկերների հետ շի կուտում: Ուրիշներն էլ կըռուելիս քաշւում է մի կողմ, մտիկ անում: որ միմեանց մորթեն էլ, մատ մատի շի խփի: Իսկ երբ իրան են ձեռք տալիս, զալիս է ու ինձ զանգատում: Հաւանում էք թիւթիւնը: Զատ լաւն է: Հա, շմոռանամ ասել, տիւմբալս ախար լաւացաւ, Վարդանն ասած կըլինի, ձեր ճարն օգնեց երեք օրում: 2է, երևելի տղայ է Վարդանը: Գիտէք ինչ, հաա,

լաւ միտս եկաւ, այժմեանից սկսել է առուտուր անել: Հապան: Նա աշակերտներին ծախում է տեսակ տեսակ ուտելիքներ, փող է աշխատում: Իմ արևը, ես կեանքում որդուդ պէս դոչադ տղայ չեմ տեսել:

Դոների մօտ տեսուչն անփոյթ եղանակով հայցըեց.

— Լաջվերդի գոյնի կաստօր ունիք:

— Կընարուի:

— Պաժալստա, մի բրիւկացու կտրեցէք, տուէք Վարդանին, բերի: Փողն, ի հարկէ, նաղդ կըտամ, Բրիւկիս քամակը մաշուել է, այ, տեսէք, ամօթ շըլինի...

Եւ Մարտին թաղդանիշը, երեսը շուռ տալով, յետ արաւ մունդիրի փէշը և ցոյց տուեց վարտիկի մաշուած տեղերը:

— Աչքիս վրայ, ասաց թաղդասարը, իսկ մըտքում աւելացընց. քո էլ, կաստօր ծախողիդ էլ, շալշար կարողիդ էլ հօթը պորտը...»

Վ. I.

Մի օր բարի Մինասը դասամիջոցին դարձաւ Վարդանին.

— Ինչու մեր տուն չես գալիս:

Վարդանը տատանուեց ճիշդ պատասխան տալու: Ամաշում էր ասել, որ հայրը պատուիրել է ոչ ոքի հետ մօտիկ ընկերութիւն չունենալ, մանաւանդ մի ինչ-որ զինագործի որդու հետ:

— Եզուց եկ, — հրաւիրեց նա, — կըգամ:

— Որ գամ ինչ կըտաս:

— Ինչ կըտամ, — արտասանեց Մինասը, չիմանալով ինչով կարող է գրաւել Վարդանին, — մածոն սիրում ես: Մենք մի լաւ կով ունինք, մայրս է կմթում:

Ամեն օր մենք ուտում ենք մածուն, թանով, կաթ-
նով, Միրում ես:

— Ես սեր եմ սիրում:
— Մեր, Մայրս մեզ սեր չի տալիս: Եւդ է պատ-
րաստում նրանից ու ծախտում: Բայց կասեմ, որ քեզ
համար սեր պահի, Կըզան:

Վարդանն այլ ևս շրկարողացաւ իրան զսպել ու
ասաց.

Ախար ես քո ընկերը չեմ:

— Խնչնւ:

— Դու ով, ես ով: Հայրս ասում է. սովորագիր
որդին չի կարող արհեստաւորի որդու հետ ընկերա-
նալ:

— Համ, — արտասանեց Մինասը անմեղաբար և,
անգիտակցօրէն նայելով ընկերոջ ոսկեզօծ քամարին
ու փայլուն կօշիկներին, կարմրեց, — ես չեի իմա-
նում: Այդ մասին Աւետարանում զըած է:

— Աւետարանն ինչ դործ ունի այսուեղ:

— Ինչպէս չէ, իմ հայրն ամեն երեկոյ կարդում
է ու ասում ամեն հրաման Աւետարանից կամ Աս-
տուածանշից է զալիս: Ուրեմն մեր տուն չես կա-
րող գալ, ամօթ է: Ավսու:

Սակայն Վարդանը չէր ուզում վիրաւորել բարե-
սիրտ ընկերոջն, որ ամեն օր նրան դասեր էր սո-
վորեցնում, ուստի հարցրեց.

— Ձեր կովը հորթ ունի:

— Ի հարկէ, ունի: Չատ սիրուն ու չաղ հորթ է:
Եմն օր ճաշից յետոյ տանում իմ նրան քաղաքից
գուրս արածացնելու: Այնքան հօնջա ու կաթնուկ է
ուտում, այնքան ուտում է, որ փորն ուռշում է եր-
կու կողմից տկնորի պէտ:

— Ասում ես էզուց կիրակի է:

— Կիրակի է:

Մեր գուքանը փակ է լինելու էզուց, տեսնենք, կաքելի է դամ:

— Հա՞մ, բաս մայթիկիս ասեմք քեզ համար սեր պատրաստի:

— Ինձ չես կանչում, — մէջ մտաւ նախանձոտ Մարտիրոսը, որ ներկայ էր այս խօսակցութեանը:

— Դու առանց կանչելու էլ գալիս ես, — ասաց Մինասը:

Թող էզուց շրդայ, — շնչաց Մինասի ականջին վարդանը, որ ամբողջ հոգով ատում էր Մարտիրոսին:

— Ի՞նչ ես փնթիմթում, գոչեց նախանձոտ մանուկը, բութ մատի յօդով բոթելով Վարդանի կողը, — աս, հասկացայ, ևս սովորագարի որդի շեմ համ: Իմ հայրը զգակ կարող է, բայց բո հօրից էլ, պապից էլ, պապիդ-պապից էլ մեծ մարդ է: Դիտես ինչ մեծամեծներ են գալիս մեր գուքան: Երէկ առկալօղօնին ինքն էր եկել, հասկանում ես:

Վարդանը բարձրաձայն ծիծաղեց:

Զինադործ Կարապետի տնակը գտնուում էր թաղի վերջում, որից գէնը կային միայն մի քանի կոբճներ, այնուհետև բազաքը վերջանում էր: Այս տնակը բաղկացած էր ընդամեննն երկու փոքրիկ սենեակներից, սրանց կից գոմից ու լընքատնից, որ, միևնույն ժամանակ, և խոհանոց էր:

Վարդանին այնտեղ ընդունեցին մեծ յարդանքով:

Կարապետը, որ նաժդակով սըստում էր մի երկայն հրացանի վողը, իսկոյն մի կողմ դըեց սոսկալի զէնքը և ոտքի կանգնեց, կոշտ ձեռլ պարզելով հիւրին: Իսկ նրա ամուսինը — Թագուհին գրկեց ու համբուրեց նրան, ասելով. «Աստուած քեզ ջուխտ ձեռներով պահի մօրդ համար, բալա»: Դա սիրուն դէմ-

քով, հազիւ քսանուինը տարեկան, գեղեցիկ աշքերով, սև ունքերով, բաց գունի մազերով մի կին էր։ Հարևան կանայք միշտ նրան նախատում էին, որ չի ուզում գլխի մազերը հինայով ներկել իրանց պէտեւ այս խոկ պատճառով նրան անուանում էին «մատուշկա»։ Թէև այս բառն այն ժամանակուայ տեղական հայ կանանց բերանում ունէր վատ իմաստ, բայց Թագուհին չէր վիրաւորւում։ Խաղըողներին նա, ներողամտաբար ժպտալով, պատասխանում էր. «աւելի լաւ է հայ քրիստոնեայի կնիկը մատուշկայի նըմանի, քան մի թուրք Փաթմայի կամ Խաճճայի»։ Ով զիտէ, գուցէ բնական ճաշակը նրան թելադրում էր, թէ բաց գունի մազերը խիստ ներդաշնակում են իւր խոշոր աշքերի մուգ դոյնին և սև ունքերին։

Կարապետը վերցրեց մի երկայն դաշոյն և սկսեց սրբել նրան այնպիսի եռանդով, որպէս Թիգօլետածօվերայում աւագակ Սպարաֆուշիլէն է սրբում իւր սուրբ։

— Բաղդասար աղան մեր քաղաքի սիւներից մէկն է, — ասաց նա, դաշոյնը պահելով լուսոյ դէմ, որ տեսնի, շըկայ արգեօք, նրա վրայ մի որ և է բիծ, — մեր պարտքն է նրան պատիւ տալ։ Այ կնիկ, երեխային մի բան տուր և տելու։

Այդ մարդու սիրած զբաղմունքներից մէկն էր միշտ մի որ և է բանով հիւրասիրել իւր որդու հասակակիցներին։ Դըեթէ ամեն երեկոյ, խանութից տուն վերադառնալիս, փողոցում մանուկներին բաժանում էր զանազան մրգեղէն։ Եւ մանուկները սիրում էին այդ կլորիկ դէմքով, մի փոքր ցցուած այտերով, մեծ ու բարեհամբոյր բերանով մարդուն, որի աշքերը, շընայելով քառասնամեայ հասակին, արտայայտում էին մանկական անմեղութիւն։ Նա ոչ միայն բարի էր, այլ և համբերողամիտ։ Կնոջ հետ

վարւում էր մեղմ, զաւակներին պաշտում էր, երբէք Մինասին չէր ծեծում: Նա գիտէր գրել-կարդալ, ո-րովհետև քահանայի որդի էր: Եղեկոներն ազատ ժամերին բարձրածայն կարդում էր Աւետարան կամ Աստուածաշունչ վանկ-վանկ, իւրաքանչիւր բառը ա-ռանձին շեշտելով, երբեմ երկար բառերի կիսում նաև տողավերջերում վերջակէտ դնելով:

Ներս մտաւ Մարտիրոսը և իսկոյն փափագ զգաց Վարդանին կմշտելու, տեսնելով նրան Կարապետի մօտ նստած: Թագուհին մէջտեղ բերեց սերի գաւա-թը և սկուտղի վրայ մի ամբողջ թարմ հաց ձե-ռով կտրտած (դանակով կտրտելը մեղք էր համա-րում):

—Ես էլ եմ դայմաղ ուզում,—գոռաց նրա դուստ-քը, երբէք տարեկան շերիքնազը սենեակի միւս ան-կիւնից:

Վարդանը նայեց այն կողմ և բարձրածայն ծի-ծաղեց: Մինասի քոյրը մի տարի ու երկու ամսական եղրօր, Սամսոնի հետ մի և նոյն ափսէից մածոն էր մտում: Սամսոնի ձեռները տակաւին լաւ ուսումնա-սիրած շըլինելով ստամոքսի ճանապարհը, մածոնը, նախ քան բերանին հասցնելը, քսում էին քթին, ծնօ-տին, ականջներին, ճակատին, կոկորդին: Այժմ նա այնքան շաղախել էր ինքնզինքը, որ ամբողջ դէմ-քից երևում էին միայն սաթի պէս սև աշքերը:

—Ա կնիկ, այն մայմունիդ էլ մտիկ արա, —ա-ռաց Կարապետը, մեղմ ծիծաղելով:

—Փշանաս դու, Միմոն տղայ, —գոչեց Թագու-հին և, մօտենալով, մի թոյլ հարուած տուեց փոք-րիկի փափուկ տեղին:

Նա վերցրեց մածոնի ափսէն: Սամսոնը բարձ-րացրեց անասելի վայնասուն: Թաւալուեց մէջքի վը-քայ ու սկսեց ձեռներն ու մերկ ոտներն ուժգին թա-

փող զարնել յատակին։ Կարելի էր կարծել, որ նրան ձգեցին եռացրած ջրի մէջ։ Կատարելով այս սովորական գործողոթիւնը, ոտքի կանդնեց, արձակուեց բրոշ վրայ և ակսեց կծոտել նրա վիզը, երեսը, ուսիրը։ Այս էլ վերջացնելով, չորքոտանի կանդնեց, գլուխը գրեց յատակին և, մերկ ոտների արանքով նայելով հօր երեսին, սկսեց բղաւել կոկորդի ամբողջ ուժով։ Աստուած գիտէ այլ եռ ինչ օյիններ ցոյց կը տար պատիկ անարխիստը հիւրերին։ Եթէ մայրը չը վերցնէր նրան և շըտանէր միւս սենեակ, ճանապարհին նրա փափուկ տեղերին տալով քանի մի խրատիչ հարուածներ։

Հազիւ վերջացել էր այս տեսարանը, երբ դընդակի պէս ներս ոլացաւ Մկիշը։

— Բարի լոյս, ուստա Կարապետ, հայրս քեզ մի ջուալ բարով է ուղարկում, գոչեց նա վերին աստիճանի հասարձակ, — քէֆդ լաւ է։ Մինաս, ինձ համար մածոն պահել ես։ Օհօ, փաճառական Վարդանն էլ այստեղ է։ Բարով, աղա, հաղար բարով, ոպրանք ես բերել ծախսիու, թէ փող ես բերել շահով տալու։ Ա քթի մազ, դու էլ ես այստեղ, — դարձաւ նա Մարտիրոսին, որն արդէն աջողել էր տասնումէկ անդամ կմշտել և իննը անդամ բօթել Վարդանին։

— Քո բանը չէ, փնթինթաց Մարտիրոսը։

— Ինչ տսացի՞ր, իմ բանը չէ, — գոչեց Մկիշն և նոյն վայրկանին Մարտիրոսի գլխի վրայով մի ուտում գործեց, — քթի մազ, անխեր Թոմաս, եարամազ։ Աղա, այստեղ ուեխիդ մտիկ անել շեն ուզում, ինչ ես եկել, աներես շան պէս թաղնել։ Օհօ, տեսէք, սէր է ուտում... Հեռո՛ւ կանգնիր, Թաղուհի բացի, հեռո՛ւ, — բացտկանչեց չարաճճին, վերցնելով հրացանն և ուղելով Մարտիրոսի կրծքին։

Մարտիրոսը կոռաց, կունատուեց և փախաւ,

թագնուեց Կարտպետի քամակում:

—Մի վախենար, որդի, հրացանը դատարկ է, —
ասաց զինագործը և շտապեց սոսկալի զէնքը խլել
Մկիշից: Կրակի կտոր է, խօմ երեխայ չէ: Քո հօք
վիզը չը կոտրուի, Մկիշ տղայ:

Մկիշը բռնեց Մարտիրոսի տեղը և սկսեց արագ
արագ ոչնչացնել սերը: Վերջացնելով նախաճաշը,
նա Կարապետին թախանձեց պատմել աւազակապետ
Մօլլա-Ղանիի մասին, որ այն ժամանակները ամբողջ
Զիլզիլ գաւառը սարսափի մէջ էր գցել: Կարապետը
սիրում էր պատմել այդ աւազակապետի սխրագոր-
ծութիւնները, երբեմն այնպիսի թանձը գոյներով,
որ ահ ու սարսափի էր ազդում ունկնդիրների վրայ...

Մի վայրկեանում նրա շուրջը կազմուեց հետա-
քրքիրների մի խումբ, պատրաստ նրա իւրաքանչիւր
բառը կանելու նոյն ախորժակով, որպէս կանեցին
սերը:

Վ. Ա.

—Մօլլա-Ղանին, որդի, Աստուած նրա տունը
քանդի, քանդեց սաղ աշխարհի տունը, պըծաւ, —
այսպէս սկսեց զինագործը, բեղերը շփելով: — Նա
մարդ չէ, հոգեհան է: Էլի նորերս եօթանասուն հո-
գու գլուխ է կտրել սոխի պէս:

Այս առաջարանից ամբողջ առւդիտօրիայի մարմ-
նով սարսուռ անցաւ: Բոլորը լարեցին իրանց լսելի-
քը, մանաւանդ Մկիշը:

—Արդուրահմանի քարվանը օրը մթնած շըմըթ-
նած կանգնում է Ղըզըլ-զաղ սարի տակ, մի աղբիւ-
րի մօտ, — շարունակեց Կարապետը, բռնելով բեղե-
րից մէկը և նայելով նրա ծայրին: — Քսանուհինդ ուղ-
տի, երեսուն ձիու և իննը անզամ իննը էշի մէջքից

բեռները վերցնում են. Բեռները վերցնում են, հէյ-
վաններին բաց են թողնում արածելու. Բաց՝ են թող-
նում արածելու, Արդուրահմանը ծառաներին հրամա-
յում է փլաւ եփել. Բըինձը լուսցած, շըլուսցած,
հեռուից երևում է մի ձիաւոր. Արդուրահմանը մատը
կծում է, թուփանգը վերցնում. Թուփանգը վերցնում
է, առաջ գնում. Առաջ է գնում ու գոռում. «աղա,
ովք եկողը»: — Աստծու հիւրը», պատասխան է լսում:
«Աստծու հիւրը աշքիս վրայ տեղ ունէ, համեցէք»: —
Սալամ Ալիքիմ. Ալիքիմի սալամ. Եկողն ասում է.
«Արդուրահման, քաղցած եմ, մի բան տուր ուտելու»:
Արդուրահմանը, դուք էք աղաներս, հրամայում է
փլաւ բիրել. Ձիաւորը ցած է զալիս ձիուց. Դէս-դէն,
իմացւում է, որ սովորապար է, գնում է Նաբրիստան
ոչխար գնելու. Փրաւն անուշ են անում, պառկում են
քնելու. Քարվանում երեսունուհինգ մարդ է լինում,
ոչ աւելի, ոչ պակաս. Քնած—շըքնած, Արդուրահ-
մանը մի թրմփոց է լսում. Թրմփոցը լսում է, ոտքի
է կանգնում, ծառաներին էլ զարթեցնում. Հայդէս,
հայդէն, ձիաւոր շըկայ ու շըկայ, տափովն է անցել,
երկինք է թռել, շըկայ ու շըկայ... Հիմայ, եթէ հա-
ըիփ էք, իմացէք, ովք էր ձիաւորը».

— Դւը, — պատասխանեց Մարտիրոսը.

— 2է:

— Սուրբ Սարգիսը, — պատասխանեց Մինասը ե-
րեսին խաչակնքելով:

— Ախմախ, սուրբ Սարգիսը թուրքի փլաւ կու-
տէր, — նկատեց Կարապետը:

— Ես ասեմ ովք էր, Մօլլա-Ղանին, — մէջ մտաւ
Մկիցը:

— Աֆարիմ տղայ, լաւ իմացար: Նա ինքն է լի-
նում:

Մանուկները միաժամանակ սարսափելի ճշացին:

Մկիչն իւր դունչը բոլորովին մօտեցըեց զինագործի քթին, արմունդները յենած ծնկներին և ձեռներով ծնօտը բոնած:

—Դուք էք աղաներս,—շարունակեց Կարապետը, թամբաքուի շոր տերեւ ափերի մէջ տրորելով, որ շիբուխը լեցնի, —ինքը Մօլլա-Ղանին է լինում: Դու մի ասա, եկած է լինում իմանալու քարվանում քանի թուֆանգաւոր կայ, ինչքան ապրանք և այլն:

—Այ սիրտ, —գոշեցին մանուկները միաբերան, բացի Մկիշից:

—Սուլան է, խօմ մարդ չէ: Հա, հէնց որ իմանում է քարվանում մի քանի հազար թումանի ապրանք կայ, դիշերուայ կիսին ձի է նստում, գնում անտառը, ընկերներին հաւաքում, յետ գալիս...

—Յետո՞յ, յետո՞յ...

—Առաջ առաջ Արդուրահմանին կապում է ծառին, յետոյ ծառաների վիզը մէկ մէկ կտրում, յետոյ ընկնում է միւսների վըայ, տուր հա կըտաս: Դէս կտրում, դէն կտրում, մի ժամում տասնունգի գլուխն է թոցնում, տասնումէկի փորերը պատում, չիգարները հանում, երեսունունգին գիւղախորով է անում, երեքին միջից կէս է անում, շներին տալիս, երկուաին չօրս-չօրս կտոր է անում, մի քսան-երեսնին էլ կիսամահ է անում, որի ականջը կտրելով, որի քիթը, որի լեզուն...

—Ինչո՞վ, թքո՞վ, թէ խանչալով, —հետաքրքրուեց Մկիշը:

—Դիմով:

—Տասնունինգ, տասնումէկ, երեսնուհինգ, երեք, երկու, քսան - երեսուն, Արդուրահմանը, ծառաները, —ալտասանեց Կարդանը, —Կարապետ ապեր, դա հարիւրից անցաւ: Դու ասացիր, քարվանում ոչ աւելի ոչ պակաս երեսունուհինգ մարդ է լինում:

— Եանդլըշ ես, շատ է լինում, բալա, — ասաց Կարապիտը, մազու շափ չըշփոթուելով, վասն զի երբ ոգնորւում էր ամենից առաջ ինքն էր հաւատում իւր երեակայութեան ստեղծագործութեանը:

— Ցետոյ, յետոյ, — կըկնեց Մկիչն անհամբերութեամբ:

— Ցետոյ ամենին թալանում է, տկլոր բաց թողնում: Սպրանքը բարձում է ձիերի վրայ ու, դարշապարին թքելով, հայդա, վախչում...

— Բաս քարվանում մի հատ տղամարդ էլ է չի լինում, — զոչեց Մկիչը վրդովուած, — այ վախկոտներ...

Նրա աշքերը յուզումից վառուել էին, այտերը կարմրել, շունչը սաստկացել սարսափելի սկատմուածքի ազդեցութիւնից:

Ես լինէի Արդուբահմանի տեղը, — մէջ մտաւ Մարտիրոսը, վիաւի մէջ մկնդիղ կածէի, կըսայի Մօլլա-Դանիին, կուտքը ու տեղն ու տեղը կըսատկէր:

— Քանի հազար թումանի ապրանք է թալանում, — հետաքքրից Վարդանը:

— Հա շատ, որդի, հա շատ: Ասում են, միայն եօթը տոպրակ ոսկի է լինում:

— Ի՞Փ, ափսոս, — արտասանեց Վարդանը հոգու խորքից, զոնէ մի տոպրակ իմ ձեռքն ընկնէր:

— Խեղճ մարդիկ, խեղճ մարդիկ, գոչեց Մինասը արտասուալի ձայնով, — ինչու «Հրաժարիմք» շեն ասել: Եթէ «Հրաժարիմք» ասէին, գիշերը քարվանի շորս կողմը եօթը շարք երկաթէ պարիսպներ կըկանուինէին, աւագակները չէին կարող մօտենալ:

Մի փոքր անցած, մանուկները դուրս եկան սենեակից խաղալու: Մինասն առաջարկեց զնալ մերձակայ բլուրը, նրանք իրանց հետ ապրան հոը-

թին. Փողոց դուրս գալիս Մկիշը ցանկապատի մի-
ջից դուրս քաշեց շոլս ցից իւր և ընկերների հա-
մար, ամելով.

— Հարկաւոր կրգայ:

Եւ, իրաւ, շուտով փայտերը հարկաւոր եղան:
Հինց որ մանուկները բարձրացան մերձակայ բլբի
զագաթը, հանդիպեցին մի խումբ թուրք պատանի-
ների. Հակառակի պէս հինց այդ պահին դրգուեց
հորթի ազատասիրութեան բնազդը. նա խլեց կապը
Մինասի ձեռքից և փախաւ, պոշը ցցելով օդի մէջ
որպէս թեթևամտութեան դրօչ. նա վազում էր դէ-
պի մի դեղնազօյն կով, երսի, իւր մօր տեղն ընդու-
նելով նրան. Թուրքերն իսկոյն բռնեցին նրան:

— Բաց թողէք, — աղապակեց Մինասը հեռուից:

— Եթէ կարող ես, ինքդ եկ, տար, — խրոխտա-
ցին թուրքերը:

Նրանք սկսեցին հորթին չարշաքել: Մէկը նըս-
տեց նրա մէջքին, միւսն ականջներից բռնած առաջ
էր քշում, իսկ մասցեալները փայտերով բզբգում էին:
Դրութիւնը տագնապալի էր. պէտք էր կամ ուժով
ուժով հորթին ազատել, որ անկարելի էր առանց
կոսւի, կամ թոյլ տալ, որ թուրքերը տանեն նրան:
Մարտիրոսը սկսեց հեռուից թուրքներին հայոյել
այնպիսի կեղոտոտ լիշոցներով, որ գիպչում էին հա-
կառակորդների հաւատին. Մէկը թուրքերից քար-
արձակեց և դիպցրեց Մինասի ոտին: Խեղճ մանու-
կր ցաւից աղաղակեց, բայց, որովհեաև երկշոտ չէր,
չըփախաւ.

— Տղերք, շատւոր են, բայց չրվախենաք, — գո-
շեց քիթը ծուռ Մկիշը, — դուք այստեղից առաջները
պահեցէք, ես այս ըոպէին կրգամ...

Սսաց և իսկոյն վազեց անհետացաւ բլբի ետե-
ւում: Վարդանն ահից դողում էր և արդէն մտածում

էր փախչելու մասին։ Մարտիրոսը շարունակ հայ-
հոյում էր։

Յանձնելով հորթին ընկերներից մէկին, թուր-
քերը միահամուռ վազեցին Մինասի վրայ և մի ըս-
պէում շրջապատեցին նրան հովուի շների պէս։ Բո-
լորը զինուած էին թոներում խանձած, ապակիով
յղկած և իւղած փայտերով։ Մի քանիսը շուխաները
հանել էին և վահանի ձևով թևներին փաթաթել։
Չընայելով վտանգին, Մինասը չէր փախչում։ Նա
այնքան էր սիրում իւր հորթին, որ պատրաստ էր
մինչև մահ կուել նրա համար։ Նա գունատ էր, աշ-
քերը պսպղում էին, նիհար կուրծքն ուսել էր։

Նրա մէջքին և ուսերին տեղացին փայտերի հա-
րուածներ, իսկ ինքը մէկին շարքից դուրս գցեց մի
աջող հարուածով։

Թշնամիները կատաղեցին նրա անվեհերութիւ-
նից։ Այն ինչ՝ Վարդանն ու Մարտիրոսն աւելի հե-
ռացան, բռնեցին ապահով դիրք, որպէս զի հարկ ե-
ղած միջոցին ամարդաբար վախչեն անվտանգ։ Մի-
նասը բոլորովին մենակ էր, թշնամիներից շղթա-
յուած, որպէս մի եղջերու շների ոհմակից։ Բայց նա
չէր էլ մտածում, թէ առանց իւր սիրելի հորթի կա-
րող է տուն վերադառնալ։ Նա օգնութեան կանչեց
ընկերներին, բայց անօգուտ։ Նա դարձեալ մի քանի
հարուածներ ստացաւ, ձեռը թուլացաւ, բայց վայտը
բաց շրթողեց։ Յարմար վայրկեան որսալով, նա հա-
րուածեց մէկի գլխին և ջարդեց։ Այն ժամանակ թուր-
քերը բռնեցին նրան և սկսեցին խեղդել։ Յետոյ զլո-
րեցին զետնին և սկսեցին ոտնակոխ անել։ Խեղճ
մանուկը յուսահատութիւնից սարսափելի ճշում էր։

Յանկարծ բլի ետևից յայտնուեց Մկիչն երկու
հասակակիցների հետ։

—Աղա, հուռոա, Մօլլա-Ղանին եկաւ, —աղաղա-

կեց նա թուրքերէն և յարձակուեց թշնամիների վը-
լայ:

Թուրքերը շփոթուեցին, Մինասին թողեցին
գետնի վրայ կիսաշունչ, Մկիշը սկսեց հարուած հա-
րուածի ետևից թափել նրանց գլխին: Մանեօվրն
անսպասելի էր: Թուրքերը սկսեցին յետ նահանջել:
Սակայն որ կողմ դիմում էին, հանդիպում էին արա-
գաշարժ Մկիշի և նրա օգնականների հարուածներին:
Վարդանն ու Մարտիրոսը սիրտ արին առաջ վազե-
լու: Այդ միջոցին Մինասն էլ ոտքի էր կանգնել:
Թուրքերը, ելք գտնելով, փախան: Բայց հորթը դեռ
նրանց ձեռքումն էր:

— Աղա, մի վախենար, հորթին էլ կազատենք
այդ քաշալների ձեռքից,—գոշեց Մկիշը, վազելով
թուրքերի ետևից:

Բարեբաղդաբար, հորթը մի զօրեղ ցնցումով
զլուխն ազատեց, փախաւ, դարձեալ պոշը վեր ցցե-
լով, այս անգամ, կարծես, իբր յաղթութեան դրօշ:
Կեանքում նա երբէք այսպիսի խելօք բան չէր արել:
Մկիշը վազեց ու նստեց նրա վզին կապած պարա-
նի ծայրի վրայ, գոռալով.

— Աղա, հուռուա...

Վոնդելով թշնամիններին, ազատելով հորթին,
փոքրիկ Սուվօրօվը յոգնած, հևալով, պառկեց մէջքի
վրայ կանաչազարդ գետնին: Այժմ միայն Վարդանն
ուշ դարձրեց նրա երկու օգնականների վրայ: Մէկը
գանգրահեր և սոնն էր, նա, որին Բաղդասարը ծաղ-
րեց ուսումարանում առաջին օրը: Միւսը մի ոտա-
բորիկ, կիսամերկ մանուկ էր Սահակ անունով, մէկը
փողոցային շրջմոլիկներից, որոնց հետ Վարդանին
խստիւ արգելուած էր որևէ յարաբերութիւն ունե-
նալ:

— Ես տուն եմ գնում, — ասաց Վարդանը:

Միասին կը գնանք, սպասիր մի բեշ խաղանք,
յետոյ. ասաց Մկիչը:

Սակայն Վարդանը իւրը պնդեց: Վերջապէս, ըն-
կերները հասկացան. որ նա չի ուզում Սահակի հետ
մի խմբում մնալ: Մկիչը վրդովուեց: Վաղուց արդէն
նա հոգու խորբում ասում էր Վարդանի գոռազու-
թիւնը:

Ձևս սիրում, համ, — գոչեց նա, ոտքի կանգ-
նելով և փայտը ձեռում ամուր սեղմելով, աղա,
սովորագարի տղայ, Սահակը քեզ պէս տասին արժէ:
Տեսար ինչպէս ձեզ ազատեց թուրքերի ձեռքից: Նրա
նման փայտ խփող շըկայ: Էէ, փայտ խփելն ինչ է,
մի երգել զիտէ, որ քո Տէր-Սահակը նրա մօտ հէշ
բան, Աղա, Սահակ, սի Առաւոտ լուսոյ կը կացըու,
թող նսմարդը լսի...

Առանց երկար սպասել տարու, Սահակը յենուեց
հովուի պէս իւր փայտի վըայ և երգեց «Առաւոտ
լուսոյ» կիսամանկական-կիսապատանեկական դիւրե-
կան ձայնով:

Ճուռ տուր շիքաստի, — պատուիրեց Մկիչը
շուտով:

Սահակը եղանակը փոխեց:

— Հը, զրան ինչ կասես: Բըզ, ես քո սովորագար
պլուսդ կնդեմ: Լաւ երգելը փող աշխատելուց հա-
գար անզամ լաւ է: Դէն, ձեռ տուր Սահակին, թէ
չէ փայտը գլխիդ հասցըի հա, ինձի քիթը ծուռ Մկիչ
կասեն: Լաւ ընկեր եղիք, լաւ ընկեր, ինչիս է հար-
կաւոր փողը: Սահակը տկլոր է ինչ անենք, հայրը
ջրկիր մարդ է, փող չունի քո հօր պէս: Բայց ընկե-
րոջ համար կեանքը շի իմայի: Աղա, հուռոա, Մօլ-
լու-Ղանին եկու...

նա, փայտը բարձրացնելով, վազեց բլից ցած:
Խումբը հետևեց նրան:

ՎԻIII

Մի գլուխ շաքարը, մի փունթ թէյն և կէս դիւժին կօլենկօրի թաշկինսակները անօգուտ շանցան Բաղդասարի համար. Մարտին Բաղդանիը Վարդանին տեղափոխեց բաժանմունք առանց քննութեան.

Յաջորդ սեպոնին Բաղդասարը, թէև անթիւ հայնոյանքներով. կըկնեց իւր տուքը նոր տարի օրը, և յաջորդ տարուայ քննութիւններին Վարդանը հըռշակուեց ոչ միայն առաջադէմ. այլև օրինակելի աշակերտ. Այն օրն, երբ Վարդանին յայտնի եղաւ այս, երջանիկ էր նրա համար. Ուսումնարանից նա ուղղակի վազեց խանութ՝ ուրախ լուրը նախ և առաջ նօրը հաղորդելու. Բաղդասարը մի թեթև ապտակ տուեց նըան այս էր նրա տմենացերմ հայրական փաղաքշանքը:

— Ի՞նչ ես բաշխելու ինձ, - հարցընց Վարդանը, որ երբէք ոչ մի հայրական փաղաքշանք առանց էտկան կաշառքի չէր ընդունում:

— Իրիկունը կիմանաս:

Կէսօրից մինչև երեկոյ — ահա յաւիտենականութիւն մեր հերոսսի համար ալդ օրը. Վերջապէս, Բաղդասարը տուն վերադարձաւ, թէյ խմեց և կնոջն ու որդուն կանչեց իւր մօտ. Հանեց գըպանից մի կաշուէ փողաման և, տալով Վարդանին, ասաց.

— Եյ ինչ եմ բաշխում քեզ:

Ի՞նչ հիասթափում — միայն այսքանը, մի փողաման, Վարդանը քիչ մնաց արտասուէը բարկութիւնից:

2Ես հաւանում: Բաց արա, տեսնենք:

Այն, ինչ որ Վարդանը տեսաւ փողամանի մէջ,

կարող էր նրան խելքից հանել — մի հատ նոր հարիւրանոց թղթադրամ:

— Ի՞մս է այս, — գոչեց նա խելազարի պէս:

— Քոնն է, Հիմայ դախըլըդ բեր, տեսնենք նա ինչ է ասում:

Այս անգամ տուփի մէջ յայտնուեց ութսուն ռուբլի:

— Այս էլ քոնն է, — ասաց Բաղդասարը, — գումարն է հարիւր ութսուն ռուբլի:

Այս մի այնպիսի խոշոր դրամազլում էր, որ հազիւ թէ Զիվիլ քաղաքում Վարդանին հասակակից մի ուրիշ մանուկ ունենար: Հասկանալի է, ուրեմն, ինչու նա վեց անգամ թռչկոտեց վերև և մի այնքան անգամ էլ վազեց անկիւնից անկիւն, ոստոստալով ուժափ տալով:

— Այդ փողերով պիտի Մարիամին պսակենք, — ասաց Բաղդասարը:

Վարդանը քարացաւ տեղն ու տեղը, արձակելով կրծքի խորքից մի սուր ճիչ: Արդարեւ, Մարիամին արդէն նշանել էին և մի ամսից յետոյ պիտի ամուսնացնէին մի երիտասարդ վաճառականի հետ:

— Հա, որդի, Մարիամի համար պատրաստութիւն տես, — մէջ մտաւ Գիւլիմը, — թող ուրիշները գարմանան, որ դու ես քո փողերով պսակումքըոզդ: Ամննքը քեզ կըգովեն:

Եթէ Վարդանը լոեց հօր առջև, այս չէր նշանակում, թէ պիտի լուռ ընդունէր մօր հարուածը: Նա կատաղած գոչեց.

— Հազար քոյր էլ շան պէս սատկի, ես մի կոպէկ չեմ ծախսի:

— Որդի, վախեցիր Աստծուց, այդ ինչ ես սում, — գոչեց Գիւլիմը, սարսափելով որդու անսըտութիւնից:

— Հա, թող Մարիամը շան պէս սատկի, փողերս
ինձ տուէք:

Բաղդասարը հոգու խորքում անշափ հաւանեց
որդու այս տրամադրութիւնը, Մի մանուկ, որ այդ-
քան պինդ է կազում փողին, իսկի քաղցած չի մնայ,
փողը նրա մօտ է վագում, ով սիրում է նրան ու
աշքի լուսի պէս պահպանում:

— Մ'ի վախսնար, — շտապեց նա հանգստացնել
Վարդանին, — ես հանաք էի անում: Ոչ ոք փողերիդ
ձեռ չի տայ: Այդ փողերով այս տարի քեզ համար
պիտի մի հակ ապրանք բերել տամ Մակարիայից:

Մարիամի հարսանիքին Վարդանը ոչ միայն կո-
պէկ անզամ շրջախսեց, այլև նաւրազէտ գտնուեց
ինքը վաստակելու: Երր խնամիներն եկան հարսին
տանելու, պարեց նրանց առջև: Հանդիսականները
զրամական պարզեներ տուեցին նրան, ոմանք թրդ-
թաղըամը թքով նրա ճակատին կպցնելով: Այս նուէր-
ները, բայտ տեղական սովորութեան, պարից յետոյ
պիտի տար սազանդաբներին. իսկ նա հանգիստ
խղճով դրեց իւր դրապանը:

Երկու ամիս անցած մեռաւ նրա տատը - Գիւ-
լիւմի մայրը: Հնարագէտ Վարդանն այս տիսուր դէպ-
քից անզամ շահուելու միջոց գտաւ: Այսպէս, օրի-
նակ. թաղման օրը Գիւլիւմը ամուսնուց թագուն
տուեց նրան երկու ըուբլի և պատուիրեց մի մասով
եկեղեցում մոմ վառել, միւս մասը բաժանել մու-
րացկաններին հանգուցեալի յիշատակին: Վարդանն
ոչ այս արաւ ոչ այն, երկու ըուբլին գցեց իւր տու-
փի մէջ ու փոխարէնը ինքն աղօթք արաւ տատի հո-
գու փըկութեան համար:

Օրից օր աւելացնելով իւր դրամագլուխը, Վար-
դանն օրից օր գառնում էր համարձակ, ինքնավս-
տահ փող վաստակելում: Նրա փոքրիկ գլուխը շա-
ՀՈԽՄՅԱՑ

րունակ խորհում էր միայն և միմիայն եկամտի նոր աղբիւրներ գտնելու մասին և միշտ դժնում էր: Մի և նոյն ժամանակ, նա երբէք ձեռք բերածով գոհ չէր և միշտ ձգտում էր դէպի աւելին: Այժմ նա ունէր մի հակ սեպհական ապրանք, հաշլում էր, հաշտում, և որքան վաճառումը աջող էր երեակայում, գարձեալ գոհ չէր մնում շահից: Հետզհետէ նոյն խակ հօր առևտուրն ու ամբողջ կարողութիւնը սկսեցին թուալ աննշան: Երբեմն գնում էր Աբրահամ աղայի մաղաղիան և այնտեղ աշկարայ տեսնում որքան իւր հայրը յետ է մնացել: Մինչ Բաղդասարը չիթուկտորը վաճառում է կտորներով, Աբրահամ աղան հակեքով է վաճառում:

Հայրիկ, աշխարհի երեսին ամենից մեծ վաճառականն ով է, — հարցընց նա մի օր:

— Մարօզօվը:

— Ել նրանից հարուստ մարդ շրկայ:

— Կայ:

— Ո՞վ է:

— Մի ջնուդ: Նա այնքան հարուստ է, որ թագաւորներին էլ է պարտք տալիս...

— Բաա: Քանի՞ զուալ ուկի ունէ:

— Ի՞նչ զուալ, ինչ խուրզին, նրա հարստութիւնը ծով է:

— Հայրիկ, ինչ է այդ ջնուդի անունը:

— Ուռշիդ:

Վարդանը լոեց և ընկաւ մտածութեան մէջ: Տասը ըոպէ անցած, սթափուեց:

— Հայրիկ, Ուռշիդն ինչպէս է այդքան փող աշխատել:

— Խարթութով ու թթուխմորի զրով:

— Բաա:

— Ուռշիդի պապը նապօքոն թագաւորի մի-

կիտանշին է եղել։ Կոռւի թունդ ժամանակ, ովք է մտիկ անողը, նա սալդաթներին գինու տեղ տուել է խարթութով ներկած ջուր, արաղի տեղ էլ տուել է թթուխմորի ջուր։ Մարդը խելք է ունեցել, համ փող է աշխատել, համ էլ սալդաթներին հարբեցողութիւնից պահպանել, որ լաւ կրուեն։

— Ո՞րտեղ է ապրում Ռւոշիդը, հայրիկ։

— Փոանզստանում։

— Մարդ իմանայ, նրա կերածն ինչ է։

— Կերակո՞ւը, ծապակած գորտ։

— Գորտ, — գոչեց Վարդանը, իւր ականջներին շը հաւատարով, — եղի։

— Փոանզստանում բոլոր մեծամեծները տապակած գորտ են ուտում։ Դրա համար էլ այնտեղ գորտ ծախտում է հատը տասը ոսկով։

— Տասը ոսկով, իֆ ի՞ֆ...

Վարդանը դարձեալ մտածութեան մէջ ընկաւ։

— Հայրիկ, — սթափուեց նա յանկարծ, — այստեղից Փոանզստան քանի օրուայ ճանապարհ է։

— Ով գիտէ, քառասուն, եօթանասուն կամ հարիւր յիսուն օրուայ։ Ինչո՞ւ ես հարցնում։

— Ուզում եմ իմանալ, կարելի՞ է այստեղից այնտեղ ապրանք տանել։

— Ի՞նչ ապրանք։

— Գորտ։

— Փիէ...

— Մեր լճերում ու գետերում այնքան գորտ կայ, որ ինչքան ուզում ես — հաւաքիր։ Կարելի է մի քանի բեռ ուղտերով տանել Փոանզստան ծախելու։

— Ճանապարհին կը հոտի։

— Ես էլ հէնց դրանից եմ վախենում։ Բայց կարելի է մեծ մեծ տակառներ շինել ու ջրի մէջ տանել։

— Թող, Աստուած սիրես, դալմաղալի մէջ կը պցնս մեղ...

IX.

Այդ օրից Վարդանին «Ուռշիդի» հարստութիւնը հանգստութիւն չէր տալիս։ Հօր պատմած առասպել-ներին աւելացնելով մի շաբք ուրիշները, սկսեց պատ-մել դասընկերներին իրը իրականութիւն։ Մի անգամ Ուռշիդի աղամանդեայ հազուստները և ոսկեպատ պարատները նկարագրելիս, պատահաբար ներկայ էր երկրորդ դասատան աշակերտ Դանիէլ Դալբաշեանը — Սրբահամ աղայի որդին, լայն երեսով, մեծ բերա-նով և հաստ քթով մի տգեղ էակ, սակայն բարեսիրտ և գուարճասէր պատանի։

— Եղա, Վարդան, — նկատեց նա ծիծաղելով, Ուռշիդ չէ այդ մարդու անունը, Խօդշիլդ։

Մի ուրիշ անգամ երբ Վարդանը դարձեալ խօ-սում էր իւր իդէալի մասին, Մկիշը հարցըց։

— Քո Ուռշիդն է մեծ մարդ, թէ պլկօվնիկը։

— Ի հարկէ, Ուռշիդը։

— Քիշ քիշ։ Պլկօվնիկը որ սալդաթներին հրա-մացի Ուռշիդիդ թափան-թըրիշը կըթափեն։

— Ուռշիդից էլ, պլկօվնիկից էլ մեծը եկիսպա-կոսն է, — մէջ մտաւ Մինսար, —

— Օհօ, դու էլ բան ասացիր. — ծիծաղեց Վար-դանը. — Եկիսպակօսի ֆէրաչէի կտորը մենք երեք բուբլով ենք ծախում. նա ինչ մեծ է։

— Էլ, երիսկաբօսի մասին ալդպէս մի խօսիր, Մարտին Բաղդանիշին կասեմ, — մէջ մտաւ Մարտի-բոսը, որ տակաւին գերազասելու ոչ մի իդէալ չու-նէր, բացի քսութիւնից։

Վէճը գուցէ սուր կերպարանը ստանար և հար-

կաղըէր Մկիշին բռունցքի միջոցով բոլորին համոզել, թէ պօլկօվնիկից աւելի մեծ մարդ շըկայ աշխաբ-հում, եթէ նըանց ուշադրութիւնը շըգրաւէր մի հանգամանք. Գանգրահեր Լեռնը մի ինքնահնար երաժշտական գործիքի վրայ նուագեց մի անուշ եղանակ: Այդ գործիքը ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ դդումի շուրացրած կեղև, որի վրէն կապել էր ձիու մազեր լարերի ձևով: Նա նուագում էր այնքան արուեստօրէն, որ ընկերները կարծեցին սազ է նուագում: Բոլորը շրջապատեցին նրան: Մկիշն իսկոյն գրանից հանեց մի փայտեայ սանը, որի բերանին փաթաթեց մի կտոր թուղթ և սկսեց, շրթունքների մէջ սահեցնելով, նուագել նոյն եղանակը: Յետոյ հրամայեց Լեռնին նուագել պարերգ և ինքը մէջտեղ ընկաւ պարելու: Մէկը ներդաշնակօրէն ձեռներով զարկում էր նստարանին, միաները ծափ էին տալիս: Շուտով պարը փոխուեց կատաղի ոստումների: Մկիշը բարձրացրեց անասելի աղմուկ, դղբաղոց ու փոշի:

Հանդիսի ամենատաք միջոցին ներս մտաւ կարմիր միրուքով, կոկորդն ու գլուխը սափրած մի թուրք: Դա թուրքերէն լեզուի զասատու Մօլլա-նուռուլլան էր, մի ուսուցիչ, որի զառերը գրեթէ ոչ ոք չէր այցելում և որը աշակերտների անվերջ կատակների առարկան էր:

— Էվալլա, Էվալլա, մըմրթաց մօլլան, ձեռները կողքերին գնելով, դա ումի հարսանիքն է, փահիան, մաշալլա, մաշալլա...

Սակայն Մկիշը շարունակում էր ոստոստալ: Մօլլայի աշքերը բարկութիւնից կայծեր էին արձակում: Այդ փոքրիկները բնաւ նրանից շեն վախենում:

— Այ ես քո հօր... զոչեց նա և վազեց Մկիշին բռնելու:

Մկիշը մի ոստումով փախաւ, ազատուեց: Նրան

հետեւցին միւսները։ Գիրութեան պատճառով մօլլայի ձեռքն ընկաւ մի մալական աշակերտ, և մօլլան սկսեց վրէժը նրանից առնել։ Միւս աշակերտները դռների արանքից և լուսամուտներից դէմքերի ծամածութիւններով աւելի կատաղեցրին նրան։ Բոնելով մի ձեռով աշակերտի ձեռները, միւսով անխնայ հարուածում էր թշուառի ուսերին ու գլխին։

—Տղերք, եկէք Միտուշկային ազատենք, —գոչեց Մկիչն ու մենսակ ներս վազեց։

Կամացուկ մօտենալով մօլլայի ետևից, բոնեց նրա շուխայի փէշը և բոլոր ուժով քաշեց։ Մօլլան, յետ ու յետ գնալով, ընկաւ մէջրի վրայ։ Ընկաւ նաև Մկիչը, Մալական աշակերտն ազատուեց, բայց Մկիչը զբութիւնը փտանգաւոր էր, որովհետեւ պատկառելի դասատուն այնպէս էր կատաղել, որ ընդունակ էր նրան խեղղելու։ Նա վաղուց ոխ ունէր Մկիչը դէմ։ Բոնեց նրա ականջներից և քաշքշեց, ծնկերով խփելով փորին ու կրկնելով։

—Այ ես քո հօր... այ ես քո պապի...»

Բարեբաղդաբար, նոյն ըուպէին ներս մտաւ տեսչը, աղմուկից գրաւուած։ Տեսարանը նրա համար սովորական էր. զրեթէ ամեն օր մօլլան աշակերտների հետ այդ տեսակ ընդհարումներ էր ունենում և զրա համար արգունական զանձարանից ստանում տարեկան երեք հարիւր ըուրիխ։

—Մօլլա, ուշքի եկէք, մօլլա, հերիք է, — գոչեց տեսուչը և հազիւ կարողացաւ Մկիչին ազատել։

Բաց թողնելով զոհին, մօլլան մի քանի վայրկեան շունչը յետ բերեց։ Նա գլխարաց ու ոտարաց էր. զդակն ընկել էր մի կողմ, արախչինը մի ուրիշ կողմ, քօշերը մի այլ տեղ։

—Մեարթին Բաղդանը, Վալլահ, բիլլահ, —ասաց նա կրծքին զարկելով, —զուր էք մեր քաղաքում

շկօլա բաց արել: Այստեղ բոլորը էշեր են, էշերի գաւակներ են, ինչ ուսում, ինչ դաւթար, նրանց ախոռ է հարկաւոր:

Նա վերցրեց գդակը և սկսեց թափ տալ ուղիղ տեսչի քթի տակ: Աշակերտները մէկ մէկ վերադարձան դասարան, խաղաղութիւնը վերականգնեց:

Տեղը նստելիս Վարդանը սեղանի տակ նշմարեց ինչ-ոք փայլուն իր: Վերցրեց, դրեց գըպանը:

Մի ժամ յետոյ Միտուշկան լալիս էր, թէ ծեծուելու պահին իւր քամարից պոկուել ու կորել է մի արծաթեայ կոճակ (այն ժամանակ մալականներն էլ արծաթէ քամար էին կապում): Բոլոր աշակերտները երդուեցին, թէ կոճակ չին տեսել:

Երդուեց և Վարդանը:

ՇԻՐՎԱՆԶԱԴԻ

Գույն բնակու (Կը շարունակուի)

Ա զարդ աշխատ վեհար մատուի մէջ եւս
այս ու ուստանուուր և այս աշխատաւ չի ունաց
նազրարանք պահուուր առաջաւ կոճակն էն պահրաց
մէջու իւր առ քամար քամար տառապուուր մէջ
այս զանու պահուածիւնուր առ զանուուր առ զանուուր
յան օնն շնառու մատուի խայլուուր զանու զանու
զանուածիւնուուր շնոր զանուուր ու զանուուր մա-
տուուր զանուուր ու զանուուր ու զանուուր
և զանուուր մէջ բայ զանուուր առ զանուուր
այս զանուուր ու զանուուր առ զանուուր այս զանուուր
այս զանուուր այս զանուուր այս զանուուր այս զանուուր
այս զանուուր այս զանուուր այս զանուուր այս զանուուր